

Συνεστειμένον





ՀԱՎԵԼՎԱԾ I
ՅԱՐԱԵՐԱԿՆԵՐ

1. ՍՈՒՄՐԱԹԻ ՀԵՔԻԱԹԸ

ժամանակով մի բազրոգյան կար, շատ հարուստ էր: Դրան ուներ մի տղա՝ անուր Սումրաթ: Էդ բազրոգյանը քառասուն չրադ ուներ, երոր էթում էր խրդի, քառասուն եղի բեռ էր բռնում, քառասուն չրադին էլ հետը տանում էր: Երոր Սումրաթը էլավ տասնութ տարեկան, հերը դրան պսակեց, մի սիրո՛ւն, փնփո՛ւշ, սիպտակ աղջիկ ուղեց, կասես թե՛ նոր էկած ձին ըլնե՛ր: Մի քանի տարուց եղը Սումրաթի հերն էլ մեռավ, մերն էլ մեռավ: Սումրաթը մնաց մենակ: Սումրաթն էր՝ առավոտն էթում էր դուքան, օրական էրկու, իրեք անգամ գալիս էր կնկանը մտիկ էր անում, էթում էր, բնքան սիրում էր: Մի օր էկավ տեհավ՝ իրանց քառասուն չրադն էլ իրանց դռանը նստած են:

Երոր հասավ դրանց, բարե տվեց: — Խի՞ եք դռանը նստել, խի՞ չեք նեքսե էթում:

— Դու տանը չիր, մենք էլ խանըմի՛ հետ անծանոթ ենք:

— Վե՛ կացեք, է՛թանք տուն:

Վե կացան, գնացին նեքսե: Հաց բերեցին, նստեցին կերան, Սումրաթն ասեց. — Խե՛ր ըլնի ձեր գալը:

Ասեցին. — Էկել ենք, որ ո՛նց որ քու հերը մեզ մտիկ էր անում, ընենց էլ դու մեզ մտիկ անես:

Ասեց. — Ես ախար մենակ եմ, չեմ կարա, օրական իրեք ան-

գամ գալիս եմ տուն, կնկանս մտիկ եմ անում, թողում էթում դու-
քանը, ես ո՞նց կարամ թողա, ըստիան էթա։ Քառասուն հոգի եք,
էկեք ամեքիդ հինգ հարուր մանեթ տամ, զնացեք ձեզ հմար ապրեք։

— Ախար չէ՞ նաղդ փող ա, կտանենք, կփշացնենք, կմանք
քու մոտին ամթով։

Կնիկն ասեց.— Դրուստ են ասում, նաղդ փող ա, հինգ շահի
մեկին, տասը շահի մեկին, կփշանա կէթա։

— Լա՛ւ, ամեքիդ հազար մանեթ կտամ, զնացե՛ք։

Ասեցին.— Մեկ ա, էլի կփշացնենք, կմանք ամթով քու կըշ-
տին, ոնց որ քու հերը մեզ պահպանել ա, ընենց էլ դու պտի պահ-
պանես։

Կնիկն ասում ա.— Դրուստ են ասում, նաղդ փողը կտանեն,
կփշացնեն, գործ տո՛ւ, գո՛րծ։

— Գործն էն ա, ա՛յ կնիկ, որ հետները պտի էթամ քաղաքե-
քաղաք ման գամ, առըտուր անեմ. երոր քեզ չեմ տենում մի սհաթ՝
խեղքս էթում ա, տենում ես օրական իրեք հետ դուքանիս դուռը շի-
նում եմ, գալիս եմ քեզ տենալու, ես ո՞նց քեզ թողամ, էթամ։

Ասեց.— Չէլա՛ւ, իմ պատկերքը քաշա՛, դիր ծոցդ, երոր կա-
րտես, հանա՛ մտիկ տո՛ւ։

— Էդ էլավ,— ասեց,— առավոտը թաղարեք տնանք, է՛թանք։

Հանեց էդ չրաղներին փող տվեց, ասեց.— Գնացե՛ք քառասուն
եղ առեք, ապրանք առե՛ք, էթանք խրիդ անելու։

Առավոտը Սումբաթը զնաց պատկերը հանին բերեց, կնկա պատ-
կերը քաշիլ տվեց, թաղարեք տեհան, մի քանի օրից եղը ընկան
ճամփա։ Գնացին։ Շատ զնացին, քիչ զնացին, մի շալիր-չիման տեղ
վեր էկան, շաղիր տվեցին, նստեցին։

Սումբաթը չրաղներին ասեց.— Մի տասն օր ըստեղ բանդ ըլ-
նենք, համ մենք կդինջանանք, համ տավարը, մեղք են, գարընքվա
տավար են։

Մի սհաթից եղը, տեհան՝ մի բաղրդյան էլ էկավ, իրանց կող-
քին շաղիր տվեց, նստեց։ Սումբաթը տեհավ դրանցն էլ քառասուն
չրաղ ա։

Էդ էկած բաղրդյանը իրա չրաղներին ասեց.— Էս բաղրդյանը
խամ ա, օրենքով մեզ պտի կանչեր ղոնաղ, ինքը մեղանից առաջ էր
էկե. հմի բան չի ասե, զնացեք իրան կանչեք՝ գա, մի քիչ խոսանք։

Գնացին Սումբաթին կանչեցին, նստեցին, խոսացին։

էդ բաղրդյանն ասեց.— Ա՛րի մի քիչ նարդի հաղանք: Քառասուն բեռ քունն ա, քառասուն բեռ իմն ա, իրար դեմ հաղանք:

— Հաղանք:

Հաղալու փիս վախտը, քիչ էր մնացե որ Սումբաթը տաներ, բիրդան կնիկն ընկալ միտը, շըշկըլեց, տարվեց: Տարվեց, ըսկսեց լաց ըլնիլը:

Բաղրդյանն ասեց.— Խի՞ հս լաց ըլնում, էրեւում ա, էդ ա քու կարողութլունը:

— Ներողութլուն,— ասեց,— էս չի՛, համա անտեղի տարվեցի:

— Ընչի՞ հմար անտեղի տարվեցիր:

— Նրա հմար որ սիրուն կնիկս միտս՝ ընկալ՝ շըշկըլեցի, տարվեցի:

— Կնիկդ ի՞նչքան սիրուն ա, որ անտեղի տարվեցիր:

Պատկերբը ծոցիցը հանում ա, շանց ա տալի:

Նրոր պատկերը տենում ա բաղրդյանը, ասում ա.— Էդ իմ սիրեկանն ա, ամեն ժամանակ որ էթում եմ ձեր քաղաքը, գալիս ա իմ կուշտը, դրա հմար խի՞ իր լաց ըլնում:

— Ի՞նչ հս ասում,— ասեց,— իմ կնիկը էդ բանը չի անի, սուտ հս խոսում, ա՛րի մարջ գանք:

— Գնա՛նք: Քառասուն բեռն իմն ա, քառասուն բեռը քունն ա, քառասուն չրաղ իմն ա, քառասուն՝ քունն ա. թե հս գնացի քու կնկա պատկերը բերեցի, քու քառասուն բեռը, քառասուն չրաղը ինձ, դու էլ ինձ նոքար, թե շրերի, իմ ունեցածը քեզ, հս քեզ նոքար:

Թե.— Լա՛վ:

Բաղրդյանը վեր ա կենում, խուրջընով ոսկին վեր ա ունում, էթում. էթում ա հասնում Սումբաթի քաղաքը: Հարցնելով, հարցնելով էթում ա տունը գտնում ա. դուռը ծեծում ա:

Հարավաշը դուռ ա գալի, ասում ա.— Գնա՛ խանըմիդ ասա՛ աղիցը նամակ եմ բերե, թող գա, տա՛մ:

Հարավաշն էթում ա, խանըմին ասում ա, թե.— Աղիցը նամակ ա էկե:

Ասում ա.— Գնա ասա, թող տա քեզ, վիկալ բն՛:

Գալիս ա բաղրդյանին ասում ա.— Տո՛ւ, տանեմ:

Ասում ա.— Գնա, ասա, ինքը գա, իմ ձեռովը տամ իրան:

էթում ասում ա: Խանումն ասում ա.— Ումից բերել ա, թո՛ղ տանի տա նրան, ինձ հարկավոր չի՛:

Ղարավաշը գալիս ա ասում.— Հարկավոր չի՛, ումից բերել ես, տար տո՛ւ նրան:

Ասում ա.— Ա՛ղջի, դուռը բաց արա՛, տամ քեզ:

Ղարավաշը դուռը մի քիչ բաց ա անում, աղջկանը բռնում ա, ձին քաշում ա նեքսև:

Աղջիկը վազում ա վիրև, ասում ա.— Խանո՛ւմ, ինձ բռնեց, վե քցեց, հրեա գալիս ա վիրև:

Խանումն ասում ա.— Իրեք հոգի ենք, իրեքս էլ ճիպոտներով տա՛նք, դուս անենք:

Բազրգյանը որ բանձրացավ վիրև, դրանք օթախիցը դուս էկան ու տվեցին, ընքան տվեցին, որ քիթ-պոռուզն արնացրին: Բռնեցին, փիլաքաններից քցեցին ներքև:

Վեր էկավ, ձին քաշեց, գնաց: Գնաց քաղաքի մի լրաղը, տեհավ մի առու կա, նստեց լրաղին լվացվեց: Իրիկվա ժամի վախտն էր, տեհավ՝ մի պառավ գալիս ա ժամիցը:

Պառավը մոտացավ, տեհավ որ քիթ ու բերանը արնոտ ա, ասեց.— Ա՛յ մարթ, էդ ի՞նչ խաբար ա:

Ասեց.— Դուսն եմ մնացեմ, է՛թանք ձեր տուն, ասե՛մ:

Գնացին պառավի տունը, բազրգյանը զվսի էկածը պատմեց, ասեց.— Ես պատկերհան եմ, ուզում էի տենայի, որ պատկերը քաշեի, համա չկարացի տենայի:

Պառավն ասեց.— Արխին կա՛ց, ես քեզ կտանեմ նրա կուշտը:

Առավոտը պառավը վե կացավ, մի էրկու բուռ ոսկի առավ բազրգյանից, գնաց խառատի կուշտը, ասեց.— Մի թեթև ըշկապ շինա՛, կեսը շուշա, ընենց ընի, մի մարթ նստի մեջը:

Խառատը շինեց, պառավը համբալի շըլակը տվեց, տարավ տուն, ասեց.— Բազրգյա՛ն, ա՛րի, սրա մեջը նստի, ես քեզ տանեմ էն կնկա օթախը:

Բազրգյանը մտավ ըշկապի մեջը, դուռը շինեց, տվեց համբալի շըլակը, տարավ Սումրաթենց տունը, դուռը ծեծեց, ղարավաշն էկավ, ասեց.— Գնա՛ խանըմիդ ասա, էթում եմ Երուսաղեմ, մի ըշկապ ունեմ, դնեմ ըստեղ ամանաթ, թե էկա՝ կտանեմ, թե չէկա՝ թո՛մնա ձեզ:

Ղարավաշը գնաց, խանըմին ասեց:

Ասեց.— Թո՛ւ բերի զնի, ի՞նչ կըլնի:

Պառաւր բերեց, բերեց դուզ դրեց աղշկա օթախը, թողաց զնաց: Բաղդդյանը շուշիցը թաքուն մտիկ տվեց, էդ աղշկա պատկերը քաշեց, մեկ էլ մնաց իրիկունը, քնելու վախտը, երո՛ր աղջիկը տկլորացավ, որ քնե՛ր՝ է՛ն վախտն էլ պատկերը քաշեց:

Պառաւր առաւոտը էկավ, ասեց.— Ես ընշանք էկա ըստեղ, զնացի, բնկերներս զնացել ի՛ն, էկել եմ՝ իմ ըշկապը տա՛նեմ:

Էլի տվեց համբալի շրակը, տարաւ իրանց տունը: Բաղդդյանը դուս էկավ, պառաւրիցը շնորհակալութիւն արեց, զնաց: Գնաց, հասաւ իրա ապրանքի մօտը. կանչեց Սումբաթին, պատկերները շանց տվեց:

Սումբաթը կաննած տեղը մոլորեց, ասեց.— Երո՛ր իմ կնկա սիրողը չըլնի, ո՞նց կարար նրա տկլոր վախտը պատկերը քաշի:

Բաղդդյանը քաշեց Սումբաթի ապրանքը քոմմա, իրան չրաղներովը տարաւ, իրան էլ շինեց նոքար:

Չրաղի մեկն էկավ, ասեց.— Աղա՛, իմ փողը տո՛ւ, ես էթում եմ, ես քու ծառեն եմ, ես էս մարթին ծառայութիւն չե՛մ անի:

Է՛ն բաղդդյանը վե կալաւ ասեց.— Ո՛նց որ քու աղեն տալիս էր, ամսական մի հինգ մանեթ էլ ավել կտամ, խի՞ չես մնում:

Ասեց.— Չե՛մ մնում:

Սումբաթը հանեց փողը տվեց, էդ չրաղը առաւ, զնաց:

Սումբաթը կանչեց, ասեց.— Որ էթում ես, զնա՛ մեր տունը, խանրմիդ էրեսին թքա՛, անցի, զնա՛:

Չրաղը վե կացավ զնաց: Մեկ օր զնաց, հինգ օր զնաց, զնաց հասաւ Սումբաթենց տունը:

Դուռը ծեծեց, դարաւաշը դուս էկավ, դարաւաշի հետ բանձրացաւ խանրմի օթախը, դուռը բաց արեց.— Ամո՛թ քեզ հմար,— ասեց, թքեց ու եդ դառաւ:

Խանութը դարաւաշներին հրամայեց, թե.— Դրան բռնե՛ք, տեհանք՝ ընչի՞ հմար պտի իմ էրեսին թքի:

Ղարաւաշները բռնեցին, ասեց.— Ընչի՞ հմար թքեցիր իմ էրեսին:

Ասեց.— Ընդրա հմար թքեցի, որ քու էրեսիցը քու մարդը հա՛մ սաղ կարողութիւնը կորցրեց, հա՛մ դառաւ նոքար:

— Էդ ի՞նչ ես ասում,— ասեց,— Էդ ո՞նց էլաւ:

Չրաղն ասեց.— Ըսենց մի բազրգյան ա էկել, գշերը քու ծոցին քնել ա, պատկերդ քաշել ա, տարել տվն Սումբաթին:

Թե.— Ղո՛րթ:

— Ղո՛րթ:

Աղջիկը մտածեց, թե էրեւում ա էն պառավի արածը կըլնի, շունքի բազրգյանը էկավ, ես ծեծել տվի, դու ա արի, ինձ չտհաւ, էլ իմ պատկերը ո՛նց պտի քաշեր:

Ասեց.— Ի՛նչ տեղ ա աղեգ:

Ասեց.— Ֆլա՛ն տեղը նոքար ա:

Ասեց.— Ընդիւան ո՛ւր պտի էթային:

Ասեց.— Պտի էթային Թեհրան:

Ասեց.— Մի ընենց ճամփա գիտա՛ս, որ մենք մի էրկու օր առաջ էթանք ընտեղ:

Ասեց.— էրկու օր չէ, իրեք օր առաջ տանեմ քեզ ընտեղ:

— Դե՛, — ասեց, — ա՛ռ քեզ փող, գնա էրկու հատ լաւ ձի ա՛ռ, էրկու ձեռք էլ ասպար ա՛ռ, մի ձեռք թագավորական թամուզ շոր ա՛ռ, մի ձեռք էլ վեզրի շոր ա՛ռ, բե՛:

Չրաղը գնաց քոմմա առավ, բերեց: Աղջիկը շորերը փոխեց, թագավորական շորերը հագավ, ասպարը կապեց, ձին նիւլավ գնաց: Չրաղն էլ վեզրի շորերը հագավ, ասպարը կապեց, ձին նիւլավ ընկավ ետեւը:

Գնացին, մի տասն օրից եղը հասան Թեհրան քաղաքի դրաղը, իմաց տվին թագավորին, թե Ինգլիզի թագավորի տղեն գալիս ա քեզ տեսություն:

Թագավորը զորք ա ղրկում առաջը, պատվով վեր ա ունում բերում ա: Երոր իրար տեսում են, բարևում են, թագավորն ասում ա.— Խե՛ր ըլնի քու գալը:

Աղջիկն ասում ա.— Խե՛ր ա, էկել եմ մի տաս-տասնէրկու օր ման գամ քու քաղաքը, թողամ, էթամ:

Էգո՛ր օրը բազրգյանները էկան հասան քաղաքի դրաղը, խաբար բերեցին թագավորին, թե մի բազրգյան ա էկել, ութսուն բեռ ունի, ութսուն էլ նոքար:

Էդ աղջիկը թագավորին խնդրում ա, թե մի իրեք օր քու թագավորությունդ ինձ տո՛ւ, ես թագավորություն անեմ, դու էլ կշտիս նստի, սելր արա:

Ասում ա.— Իրեք օր չէ, իրեք շաբաթ իրավունք ունես:

Երո՞ր աղշիկը նստեց թագավորի թախտին, թագավորութուն էր անում, բազրգյանը՝ Սումբաթի ձեռը մի խոնշով փեշքաշներ տված, էկան։

Աղշիկը տեհավ, որ իրա մարդը դառել ա նոքար՝ շատ սիրտը լցվեց, ասեց.— Ի՞նչ մարդ եք։

Բազրգյանն ասեց.— Ես բազրգյան եմ, ութսուն բեռ ունեմ, ութսուն էլ նոքար ունեմ, էկել եմ քու քաղաքը՝ ապրանքս ծախեմ, քեզ փեշքաշ եմ բերեմ։

Աղշիկն ասեց.— Ախար բազրգյանները քառասուն բեռ, քառասուն նոքար են ունենում, էդ ո՞նց ա, որ քունը ութսուն բեռ, ութսուն նոքար ա։ Ըդքան կարողութունը մի մարդի էս երկրի էրեսին դժար կպատահի. էս ո՞նց ա, որ ըդքան ապրանքը քունն ա, ա՛րդուդ ասա՛։

Ասեց.— Դրուստ ա քու ասած խոսքը, թագա՛վորն ապրած կենա, էդքան ապրանքը մի մարդի չի ըլնի, մենակ,— ասեց,— էս ապրանքի կեսը էս տղինն ա։

— Ո՞նց էդ տղինն ա։

— Երո՞ր պատահեցինք իրար, իրար հետ նարդի հաղացինք, սրան տարա, սկսեց լաց ըլնիլ, ես հարցրի, թե. «եհի՞» ես լաց ըլնում», ասեց. «Ես նրա հմար եմ լաց ըլնում, որ անտեղի տարվեցի, փա՛ռք ասու, ինչքան ունեմ ըստեղ, հինգ ըտքամ էլ տան ունեմ. բիրդան կնկանս պատկերը միտս ընկավ, ես ըտեղ շըշկվեցի, տարվեցի»։ Ասեցի. «Ա՛խ կնկանդ պատկերը տենամ»։ Հանեց տեհա, շատ սիրուն էր։ Ես էլ չկարացի ուրիշ պատճառ բռնի, ասեցի. «Քու կնիկը իմ սիրեկանն ա»։ Էդ տղեն սրտի հերսիցը լաց լլավ, թե՛ թ՞ի՛նչ ես ասում, թե ես գիտամ, իմ կնիկը էդ բանը չի անի»։ Երո՞ր հակառակվեց, ասեցի. «Արի՛ պայման կապենք. թե զնացի քու կնկա պատկերը բերի՝ էնա քու քառասուն բեռն էլ, քառասուն չրաղիդ հետ իմը ըլնի, դու էլ իմ նոքարը դառնաս, երո՞ր չրերի՛ իմ քումմա ապրանքը քեզ իմ նոքարներով, ես էլ քեզ նոքար»։ Վե կացա, զնացի հասա Սումբաթի քաղաքը. հարցնելով հարցնելով՝ զնացի տունը գտա. դուրը ծեծեցի, դարավաշը դուռ էկավ, ասեցի. «Գնա՛, խանմիդ ասա՛ դա, նամակ եմ բերեմ, աղիցդ, տամ իրան»։ Գնաց էկավ, ասեց. «Տո՛ւ, ես տանեմ», ասեցի. «Զի՛նի, ես իմ ձեռովը պտի տամ»։

Ըտեղ աղջիկը հարցրեց.— Ընչի՞ հմար նամակը դարավաշին չտվիր, տանի:

— Թագա՛վորը սաղ ըլի, չտվի, որ ինքը գար տենայի, ես պատկերհան եմ, պատկերը քաշելի: Եբոր ասեցի, թե. «Իմ ձեռովը պտի տամ», դարավաշը գնաց, էկավ, թե ասում ա. «Ո՛ւմից բերել ես, տար տուր իրան»: Ծարս կտրվեց, դարավաշին բռնեցի, մտա նեքսն: Աղջիկը հրամայեց դարավաշներին, ճիպոտները վե կալան, ինձ էնքան տվին, որ էլ չիմացա, թե ո՛նց գլուխս ազատեցի: Գնացի մի առվի վրա, որ լվացվեմ, տեհա մի պառավ էկավ, գնացի էդ պառավի տունը, ըդրան պատմեցի գլխիս էկածը: Պառավը մի ըշկապ շինիլ տվեց, ինձ մեջը դրեց, տարավ աղջկա տունը, ասեց. «Ես պտի էթամ Երուսաղեմ, թո՛ղ էս ըստեղ մնա, թե էկա՝ կտանեմ, թե չէկա՝ քեզ ըլնի»: Ըշկապի միջիցը պատկերը քաշեցի: Առավոտը պառավն էկավ ըշկապը վե կալավ, տարավ: Եբոր հասցրեց իրա տունը, վե կացա, էկա, պատկերը բերեցի շանց տվի տղին, էս մալը զավթեցի:

Աղջիկն ասեց.— Զանլա՛թ:

Զանլաթը էկավ. հրամայեց, բաղրգյանին կտոր-կտոր արին: Եդ դառավ Սումբաթին, ասեց.— Սրա ապրանքն էլ, քու ապրանքն էլ քեզ ըլնի, տար ծախա՛, եբոր կծախես կպրծնես, մի օր առաջ ինձ իմաց տո՛ւ:

Սումբաթը շնորհակալություն արեց, գնաց: Եբոր ապրանքը ծախեց պրծավ, էկավ ասեց, թե. «Է՛գուց էթում եմ իմ քաղաքը»:

Աղջիկն ասեց թագավորին.— Ես էլ պտի էթամ, շնորհակալ եմ քեզանից էլ, քու ժողովրդիցն էլ:

Վե կացավ, իրա շրաղին վե կալավ գնաց, հասավ իրա տունը:

Մի էրկու օրից եդը Սումբաթը թագա ապրանքը առած էկավ իրա դուքանի առաջին վեր ծածեց, ասեց.— էթամ տուն դիպչեմ, գամ, դուք տեղավորեք:

Էկավ տուն, տեհավ թագավորը ընտեղ նստած ա, վեզիրն էլ կողքին կաննած: Զարմացավ մնաց: Մտածեց, թե կա, չկա, էս իմ կնիկը սիրող ա անում: Եբոր կնիկը մարդին տեհավ, ասեց.— Արի՛ նստի, արի՛ նստի:

Ասեց.— Ներողությո՛ւն, էթամ ապրանքը տեղավորեմ:

Ասեց.— Խի՞ քու ծառեքը հավատարիմ չե՞ն, նրանք կտեղա-վորեն:

Վե կացաւ թագաւորը, մտաւ էն մեկել օթախը, շորերը փոխեց, իրա շորերը հագաւ, էկաւ բարեւեց: Մարդը շատ տխուր էր, անշախ բարեն առաւ:

Ասեց.— Խի՞ էս տխուր:

Ասեց.— Շամփից եմ էկե, բեղարել եմ:

Ասեց.— Նիաթդ մի՛ կախի, էն թագաւորը ես ի, ե՛ս, բա սրան չե՛ս տենում, էս ո՞վ ա:

Տեհաւ, որ իրա շրաղ Կարապետն ա: Նո՛ր հասաւ փաթըթիւեց կնկանը, լաց էլաւ:

Ընդրանք հասան իրանց մուրադին, ով որ կարոտ ա՝ նա էլ հասնի իրա մուրադին:

Աստանից իրեք հատ խնձոր ընկաւ, մինն ասողին, մինը՝ լսողին, մինն էլ՝ անկաշ դնողին:





2. ԱՎԶԻ-ՕՂԼԻ

Կըլնի, չիլնի մի մարդ, մի կնիկ: Սրանք ալեի-մալեի մի մի-նուճար տղա են ունենում, էլ զադ չէ: Էս մարդը լավ ավչի ա ըլնում. աստու իրան օրը նետվանեղը վեր էր ունում, էթում մեշեն, ավ անում, բերում ավի մսովը իրա խիզանը պահում: Էս Ավչին շատ էր ծերացե, դեն ընկե. օրեն մի օրն էլ հիվանդանում ա, տեղով-բարձով պառկում, էլ չի վե կենում, մեռնում ա:

Էս Ավչու տղեն ա՝ եր մեծանում ա, իմանում ա, որ իրա հերը ավչի ա էլե, գալիս ա, մորն ասում.— Ես էլ պտի ավչություն անեմ, իմ հոր փեշակը բանացնեմ. բե՛ իմ հոր նետվանեղը տո՛ւ, էթամ հանդը, ավ անեմ, բա՛լքի կամաց-կամաց սարվեմ:

— Շա՛տ լավ ես միտք արե, ա՛յ որդի,— կասի մերը,— տե-նում ես աշխատանք անող չկա, ըսկի չէ՝ հո ֆորսի միս էլա կու-տենք, սթար կանենք:

Կէթա մարդի նետվանեղը կբերի, կտա տղին, ջովստ թուշը կպալի, ճամփու կդնի հանդը:

Էս տղեն ա՝ կէթա հանդը, ծիտ, շոբան-խաբով ուստ կգա, նետվանեղով կտա, վե կքցի, վե կունի կբերի տուն: Մերը կուրա-խանա, աշխարով մին կըլնի, որ տղեն հոր փեշակը սարվում ա: Ըսենց մին, էրկու, իրեք, հինգ, տասը, տղեն էթում ա չոլը՝ ըսկի դարտակ չի գալի, դշից-մշից մի զադ վեր ա քցում, բերում տուն:

Ըսենց անց ա կենում մի քանի վախտ. տղեն ընենց թեղ ա սար-
վում ավելթյունը, որ էլ չէլած, կարգին հոր փեշակը բանացնում ա:

էս Ավչի-օղլին ա՝ ո՛ր նետվանեղ բանացնելը լավ սարվում ա
պրծնում, միտք ա անում դհա հեռու տեղերանք էթա ավի:

Օրեն մի օր նետվանեղը վե կալավ, աստու անումը տվեց, ըն-
կավ ճամփա դպա մեշեն: Գնաց, դնաց, հասավ մեշեն. ըստե ընչանք
իրիկուն ավ արեց, ուղում էր տուն դա, տեհավ՝ մի մղրբը կոխեց.
էլ չուղեց էս բեկվախտին էթա, ասեց. «Նիլնեմ մի բանձր ծառի ծե-
րը,— որ ինչ ա՝ ջանավարները վրա չտան,— ընչանք լիսանա, նո՛ր
վե կենամ, էթամ տուն»: Ման էկավ, մի բանձր ծառ գտավ, էլավ
ծառի գլուխ, ընդե քնեց:

Գիշերվա մի վախտ Ավչի-օղլին զարթնում ա, ի՛նչ տենում՝
հրես սաղ մեշեն ընե՛նց լիս ա, ընե՛նց լիս ա, հենց իմանաս չրաղ-
դան ըլնի: Հենց իմացավ սաղ մեշեն կպել ա, վառվում ա: է՛ս լան
մտիկ արեց, է՛ն լան մտիկ արեց՝ զաղ չգտավ. բիրդան աչքը քցեց
ներքե, տեհավ՝ հրե՛ս մի եքա ջանավար էկել ա փուվել էդ բանձր
ծառի տակին, ինքն էլ ընե՛նց ա պսպղում, ֆրոֆրոհար դալի, կա-
սենաս ակն ու արեղակ ըլնի:

Ավչի-օղլին էս որ չի՛ տենում, սիրտը ահ ու դողն ընկնում ա.
միտք ա անում՝ նետվանեղը քաշի, տա՛ էդ ջանավարին տեղնու-
տեղը սատկացնի, մին էլ վախում ա՝ փրստ անցկենա, ու ջանավարը
դհա կատաղի, վրա հասնի իրան, նիլնի ծառը, իրա մենձ թիքեն
անկաջը թողա: Միտք արեց, միտք արեց, վերջը որ շատ միտք ա-
րեց. «Յա՛ տեր աստոժ, դո՛ւ ըլնես իմ կռանր,— ասում ա,— ի՛նչ
կըլնի, կըլնի, պտի տամ»: Ասում ա ու նետվանեղը բռնում ա դպա
ջանավարը: Տալու բաշտան ջանավարը մնում ա տեղնուտեղը:

Ալուստի տղեն ծառիցը վեր ա գալի, ուղում ա ջանավարի ջամ-
դաքը քաշ տալով բերի հասցնի գեղը, տենում ա՝ շատ ծանդր ա.
բերում ա կաշին քերթում ա, ընե՛նց թամոզ, իստակ քերթում ա՝ կա-
շին սկի մի տեղ էլ ա չի ծակվում. եննա ծալում ա, քցում շալակը.
բերում տուն:

Մերը ջանավարի փոստը որ տենում ա, մնում ա զարմացած:

— Տղա՛,— հարցնում ա,— էս սիրուն փոստը՝ ո՛րդիան ա:

— Ա՛յ մեր,— ասում ա տղեն,— բա չե՛ս ասի՛ ըսե՛նց, ըսե՛նց,
քսե՛նց բան:— Նստում ու ըստե մին-մին նաղլ անում իրա գլխով
անցկացածը, ոնց որ ես ձեզ նաղլ արի:

— Էդ լա՛վ էլավ,— ասում ա,— տո՛ւր հազիր Թագավորին փեշքաշ. նա էլ քեզ լա՛վ-լա՛վ փեշքաշներ կտա սրա տեղակ, ճամփու կդնի:

— Լա՛վ, ա՛յ մեր, ո՛ր ասում ես, կտանեմ:

Էս տղեն ա՛ն էգսի օրը ջանավարի կաշին վեր ա ունում, դո՛ւզ էթում դպա Թագավորի ամարաթը: Էթում ա, մննում ա նեքսև, Թագավորին գլուխ տալի, փոստը աղաքին բաց անում: Թագավորը, իրա նազիր-վեզիրը էս որ շեն տենում, բերանները մնում ա բաց, քե էս ի՛նչ Թավուր ջանավար ա, որ կաշին ըսե՛նց լիս ա տալի: Թագավորը հրամայում ա՝ Ավլի-օղլուն լա՛վ-լա՛վ փեշքաշներ տան, ճամփու դնեն:

Համա նազիր-վեզիրը իրանց մտքումը շատ են թոնթորում տղի վրեն, քե. «Ո՛նց սրա պես մի ջահել տղեն կարենա Թագավորին ըսենց փեշքաշ բերի, մենք չկարենանք: Յա՛վաշ սրա գլուխը մի ընե՛նց օյին բերենք, որ ինքն էլ մնա շշմած»:

Վեր են կենում գալի Թագավորին գլուխ տալի, ասում.— Թագա՛վորն ապրած կենա, էս արեգակի պես շողշողուն կաշուն պետք ա ֆլի ոսկոռներից մի ամարաթ, որ նրա հեննա սազի:— Թագավորի բեյինը կմենի էս բանը:

— Շա՛տ լավ եք ասում,— կասի,— ֆլի ոսկոռներից մի լավ ամարաթ դրուստ որ շատ լավ կըլնի. համա ո՞վ կարա բերի:

— Է՛հ, Թագա՛վորն ապրած կենա,— կասեն նազիր-վեզիրը,— դրա վրա՛ էլ ես դարդ անում. էս Թավուր ճրագի պես վառվող կաշի բերողի ձեռքին ի՛նչ դժվար բան ա ֆլի ոսկոռները բերիլը: Թե բերի՝ Ավլի-օղլին կբերի, էլ մարդ չէ:

— Բա՛ս որ ըտենց ա, գնացե՛ք Ավլի-օղլուն կանչեք գա,— կասի Թագավորը:

Էն սհաթը նազիր-վեզիրը կէթան, Ավլի-օղլուն կկանչեն, կրեռն Թագավորի կուշտը:

Ավլի-օղլին կգա Թագավորին գլուխ կտա, ընդե կկաննի:

— Տղա՛,— կասի Թագավորը,— պտի էթաս ինձ հմար էնքա՛մ ֆլի ոսկոռ բերես, որ մի ամարաթ շինիլ տամ, միջին ապրեմ. կա՛րա՞ս բերի:

— Թագա՛վորն ապրած կենա, կբերեմ, խի՛ չեմ բերի. համա ի՛նչ որ ուզեմ՝ քու նազիր-վեզիրը քոմա պտի տան, ռազի՞ ես:

— Ռա՛զի եմ,— կասի Թագավորը,— թող քու ասածը ըլնի:

Տղեն թագավորին գլուխ կտա, կթողի կէթա տուն, մօրը նաղլ կանի թագավորի ուղածը:

Սրա մերը իմաստուն կլնի, կասի.— Դու սկի դարտ մի անի, կէթաս թագավորիցը իրեն հարիւր մարդ կուղես, իրեն հարիւր տիկ գինի, իրեն հարիւր տիկ արաղ. վե կունես կէթաս ֆլա՛ն մեշեն, ընդե օխտը մենծ հավուղ կա. էդ հավուղների ջուրը լավ կկոճես, դուս կածես, էդ գինի, արաղը շուռ կտաք էդ հավուղների մեջը. ֆլերը ճաշվա էն ճնշոթան շոգին կգան կխմեն. խմելու բաշտան քոմմա կբեֆովանան, վե կթափեն, դու քու մարդկերանցովը վրա կհասնես, քոմմերին էլ կկոտորես, ոսկոռները կջըկես, կբարձեք սելերը, կդաք:

— Լա՛վ,— կասի տղեն,— ո՛նց որ ասեցիր, ըտե՛նց էլ կանեմ:

է՛հ, էդ տղեն ա՛ էգսի օրը թեղ վե կկենա, կէթա թագավորի ամարաթը, թագավորին խօրը գլուխ կտա, կասի.— Թագա՛վորն ապրած կենա, ինձ պտի՛ տաս իրեն հարիւր մարդ, իրեն հարիւր սել, իրեն հարիւր տիկ գինի, իրեն հարիւր տիկ արաղ:

Թագավորն էն սհաթը հրամայում ա, որ տղի ուղածը քոմմա բերեն տան: Բերում են, ամեն բան հաղորում, ճամփի թաղարեք տենում, ընկնում ճամփա:

էթում են, էթում են, շատն ու քիչը աստոծ գիտա, մի՛ օր, է՛րկու օր, մախլասի՛ մի շարաթ, հասնում են Ավլի-օղլու մօր ասած մեշեն: էթում են դե՛ս-դե՛ն ընկնում. ո՛ր շատ ման են զալի, էթում են էն հավղները գտնում են: էդ հավղների ջուրը Ավլի-օղլին թամուղ կոճել ա տալի, գինի, արաղը քոմմա դարտկում են էտ օխտը հավուղը, իրանք էլ էթում են դրաղ տափ կենում: Անց ա կենում մի՛ սհաթ, է՛րկու սհաթ, էն ճաշվա զըռ շոգին, մին էլ ի՛նչ տենան՝ եքա սուրուքով ֆլերը:

Գալիս են քոմմա վրա պրծնում, որ ինչ ա ջուր խմեն. արաղի, գինու ֆոտիցը հուշտ են ըլնում, փռնչալոն եդ փախշում. համա դե՛ ո՛րդե պտի ջուր գտնին, որ խմեն. էլի մի քիչ վախտից եղը վրա են պրծնում ու մի կուշտ քաշում գլխները. հենց խմելու բաշտան քոմմա հարբում են, շուլուքլութ ըլնում, վե թափում:

էս Ավլի-օղլին ա՛ էն սհաթը իմաց ա տալի հընկորտանցը՝ վրա են պրծնում մի սհաթումը քոմմերին մորթոտում, քերթում, ոսկոռները բարձում սելիքը, ընկնում ճամփա դպա իրանց երկիրը:

Հսենց գալիս են, գալիս են, մի՛ օր, է՛րկու օր, մախլասի՛ մի

շաբաթ, գալիս հասնում են թագավորի երկիրը. դո՛ւզ սեղանը քշում են թագավորի ամարաթի աղաքին վեր ածում:

էս որ տեսնում են՝ թագավորի նազիր-վեզիրը մնում են մոլորած, թե էս ի՛նչ բան էր, որ իրանց ղրկած տեղիցը Ավլի-օղլին սաղսալամաթ եղ էկալ: Միտք կանեն, որ թագադան ընե՛նց տեղ ղըր-կեն, որ էլ ըսկի եղ գալու ճար չլինի:

Համա թագավորը ուրախացել, աշխարհովը մին էր էլի. էս ոսկոռների հմար Ավլի-օղլուն լավ-լավ փեշքաշներ կտա, քոմմա կդնի իրա տանը:

Ըսենց երկար վախտ էդ ֆլի ոսկոռները կմնա թագավորի ամարաթի աղաքին վերածած:

Կգա էդ երկիրը խուլեր կընկնի. ընե՛նց խուլեր, ընե՛նց խուլեր, որ էլ չէլած: Օրական մի հազար մարդ կմեռնի խուլերիցը: Թագավորը իրա նազիր-վեզիրին կկանչի, դիվան կսարքի, որ տեսան, թե՛ էս ի՛նչ բան ա, խի՞ բիրդան ըսենց խուլեր ընկավ իրանց երկիրը:

Ձաթի նազիր-վեզիրը դրան ին բանդ, հենց էն սհաթը կասեն. — Ավլի-օղլունն ա միղքը, նա որ ֆլի ոսկոռները չընրեր, չթափեր ըստերանք, ըսենց խուլեր չէր ընկնի մեր երկիրը:

Թագավորը կհարցնի. — Բա ի՛նչ անենք, ո՞վ կարա ամարաթը շինի, էս ֆլի ոսկոռները հավաքի ըստերանք:

— Սավայի Ավլի-օղլուցը մարդ էլա չի կարա շինի, — կասեն նազիր-վեզիրը:

էն սհաթը մարդ կղրկեն, Ավլի-օղլուն կկանչեն. թագավորը կասի. — Որ էս ֆլի ոսկոռներիցը ամարաթ չշինես՝ իմաց կա՛ց, որ քյալլա կանեմ քեզ:

Խեղճ Ավլի-օղլին դառը-տխուր կգա, մորը նաղլ կանի թագավորի հրամանը:

Մերը կասի տղին. — Ա՛յ որդի, ըսկի դարտ մի անի, զնա թագավորիցը հազար ուղտարեռ նոխուղ, շամիչ ուղա, ընկի ճամփա: Կէթաս, կէթաս, մի մենեժ ծովի ռաստ կգաս: Էդ հազար ուղտարեռն էլ շուտ կտաս ծովը, ծովի ձկները կուտեն, կէթան, իրանց թագավորին իմաց կտան: Թագավորը դուս կգա ջրիցը քեզ կհարցնի, թե՛ լի՛նչ ես ուղումս. դու էլ կասես՝ լի՛նչ տա՛ր, էն ծովի մեջտեղի ցամաքը հանի: Քեզ կտանի ծովի միջի ցամաքը, ըստեղ քու հոր աղպերն ա մնում, կէթաս նրա կուշտը, նաղլ կանես՝ ի՛նչ որ քեզ հրամայել ա թագավորը:

Է՛հ, Ավչի-օղլին էգտի օրը վն կկենա կէթա, թագավորիցը կուզի հաղար ուղտաբեռ շամիշ-նոխուղը, կընկնի ճամփա: Կէթա, կէթա, կէթա, շատն ու քիշը աստոժ գիտա, մի՛ շաբաթ, է՛րկու շաբաթ, մախլասի՝ մի ամիս, կհասնի մոր ասած ծովին: Էդ հաղար ուղտաբեռն էլ շուռ կտա շոռալոն ծովը, ինքը դրաղին կնստի, թամաշ կանի: Անց կկենա մի սհաթ, էրկու սհաթ, մին էլ կտենա, Ը՛հ, հրեա Ձկնեթի թագավորը դուա էկավ:

— Հը՛, ի՛նչ ես հրամայում, ուղա, անեմ,— կասի Ձկնեթի թագավորը:

Տղեն կասի.— Ձադ շեմ ուղում. ուղում եմ, որ ինձ տանես, ծովի մեշտեղի ցամաքը հանես:

Էն սհաթը Զուլը կասի.— Նի՛լ մեջքիս:—Տղեն կնստի Ձկան միջքին, մի սհաթումը կտանի կհասցնի ծովի միջի ցամաքին: Տղեն քտե վն կդա, կէթա հորողը որը կգտնի, նաղ կանի, ի՛նչ որ թագավորը հրամայել էր:

Էն սհաթը հորողը որը մատի մատանիքը ժած կտա, կասի Ավչի-օղլուն.— Գնա՛, ամառաթը հմի հաղիր ա:

Ավչի-օղլին ուրախ-ուրախ էլ եդ կնստի Ձկնեթի թագավորի միջքին, եդ կդառնա ծովի էն էրեսը. Ձկնիցը շնորհակալ կըլնի, ճամփա կընկնի իրանց երկիրը:

Շա՛տ կէթա, քի՛չ կէթա, աստուն ա այան, սաղ-ոսլամաթ էլ եդ կհասնի իրա վաթանը: Կգա, դրո՛ւստ, կտենա թագավորի ամառաթի տեղը քնենց մի թաղա ամառաթ ա կաննած, քնե՛նց մի ամառաթ, որ էլ շեմ կարա ասի. մարդ ուղում ա՝ ո՛նչ ուտի, ո՛նչ խմի՝ հենց էդ ամառաթին հայիլ-մայիլ րլնի, թամաշ անի: Դո՛ւզ էթում ա թագավորին դուխ տալի, էն դիհը կաննում: Էլի թագավորը լավ-լավ փեշքաշներ կտա, ճամփու կդնի Ավչի-օղլուն իրա տունը:

Սրանց թողանք քստե, գանք խաբարը տանք թագավորի նաղիր-վեղրիցը:

Նաղիր-վեղրը էս որ կտենան, դհա՛ կպատռեն, տրաք-տրաք կգան. թաղադան միտք կանեն, բալքի Ավչի-օղլուն լափ կորցնիլ տան:

Վն կկենան, էլի կգան թագավորին՝ դուխ կտան, կասեն.— Թագա՛վորն ապրած կենա, էս քոմմա լա՛վ, համա էս տեսակ ամառաթը հո՛ւ էլած, հո՛ւ չէլած. ք՛նչի ա պետքը առանց Անմահական ջրի,

առանց Անմահական խնձորի. ա՛յ, ըստոնք էլ որ բերիլ տաս, դրուստ որ քու լայաղի ամարաթներ կունենաս:

Թագավորի բռնիքը կմենի սրանց ասածը, կասի.— Շա՛տ լավ եք ասում, համա ո՛վ կարա էդ Անմահական ջուրը, խնձորը բերի:

— Տնաշե՛ն, դրանից էլ հե՛շտ բան. ֆլի ոսկոռ բերողի, էսթավուր ամարաթ շինողի ձեռին դժա՛ր ա Անմահական ջուրն ու Անմահական խնձորը բերիլը: Ավլի-օղլու ձեռին ըստոնք մի օրվա բան ա. համա սաղ աշխարքի միջին քու պալատը մի հատ կըլնի,— կասեն Թագավորի նազիր-վեզիրը:

Թագավորը էն սհաթը կհրամայի Ավլի-օղլուն կանչեն. մարդ կդրկեն, Ավլի-օղլին կգա, գլուխ կտա Թագավորին, աղաքին կըկաննի:

— Տղա՛, — կասի Թագավորը, — թե իմ ամարաթի հմար կա-րեցար Անմահական ջուրն ու Անմահական խնձորը բերի, իմացած կաց՝ ի՛նչ ուզես կտամ, համա որ չբերեցիր՝ գլուխդ կթռնի վրիցդ. դու գիտաս:

Խեղճ Ավլի-օղլին էլի դառը-տխուր գալիս ա տուն, մորը նաղլանում Թագավորի հրամանը:

Մերը ասում ա.— Ա՛յ որդի, դու ըսկի դարտ մի անի, ես քեզ ի՛նչ կսովորցնեմ, դու ընենց արա՛, քեզ դիան չի պատահի:— կասի.— Նետվանեղդ վե կունես, կէթաս ֆլա՛ն մեշեն, ընդե մի մենծ ծառ կա, էդ ծառի վրեն Արծիվը բռն ա դրե. Վիշապը ամեն վախտ գալիս ա, Արծիվի ճտերը ուտում ա: Կէթաս մի դրադ տեղ տափ կկենաս, էն Վիշապին կսպանես: Արծիվը քեզ կհարցնի, թե՛՛ս է՛նչ ես ուզում, ասա՛ տամ: Դու կասես, որ. «Անմահական ջուր ու Անմահական խնձոր»: Նա քեզ կասի, թե ո՛նց պո՛ւի բերես:

Ավլի-օղլին ա՛ էգսի օրը աղոթրանին՝ թեզ վե կկենա, իրա նետն ու աղեղը կքցի ուսը, մոր հեննա սմնաս բարովն կանի, կընկնի ճամփա: Կէթա, կէթա, շատն ու քիւր աստոծ գիտա, մի՛ օր, է՛րկու օր, մի՛ շաբաթ, է՛րկու շաբաթ, մախլասի՛ մի ամիս, կհասնի մոր ասած մեշեն. դե՛ս ման կգա, դե՛ն ման կգա, էն մենծ ծառը կգտնի: Կտենա, դրուստ որ, հրե՛ս Արծիվի ճուտերը իրանց բռնում ծառի վրեն քնած են. կէթա ուսովով մի դրադ տեղ տափ կկենա: Անց կկենա մի վախտ, մըկ էլ ի՛նչ տենա՝ հրես մի եքա Վիշապ էկավ շուլալվեց էդ ծառը: Վիշապին տենալու բաշտան Արծիվի ճուտերը ծլվողցը կքրցեն. հենց էդ վախտը Ավլի-օղլին՝ առ հա՛, նետով կտա Վիշապին.

Վիշապը ծառիցը վե կրնկնի, կկիտվի էն դիհը. ինքն էլ դաթի բեզա-
րած ա ըլնում, պառկում ա ծառի տակին ու անուշ քնում ա: Արծվի
ձաւերն էլ դալիս են թեւերը փռում են էդ տղի գլխին, որ արեւը շտա,
դինջ քնի, շունքի ճաշվաւ նընջոթան շոգի արեւի փիս վախտն էր:

էն դհիցը Արծիվը կգա, կտենա՝ հրեա իրա բնի ծառի տակին մի
մարդ ա սլառկած. կուռնա, որ ձվիդ-ձվիդ անի, հենց կիմանա՝ ա-
մեն վախտ դա ա կերել իրա ճուտերին. նո՛ր ընդիան ճուտերը քոմ-
մա նաղլ կանեն Ավշի-օղլու արած լավությունը, Վիշապի ջամդաքն
էլ շանց կտան իրանց մորը: Արծիվը ո՛ր էս կիմանա, իրա թեւերն էլ
կփռի, որ դհա հով ըլնի Ավշի-օղլուն: Ըսենց կքնի մի՛ սհաթ, է՛րկու
սհաթ, բիրդան կդարթնի կտենա, որ հրեա Արծիվը իրա ճուտերովը
թեւերը բաց են արել իրա վրա, որ հով ըլնի: Միրտը կարխանա-
նա, ուրախ-ուրախ տեղիցը վե կկենա, էն դիհը կկաննի:

Արծիվը կասի.— Ի՛նչ ես ուղում, ա՛յ հողածին, ասա՝ տամ, որ
բու լավությունի տակիցը բալի դուս գամ:

— Զագ չեմ ուղում,— կասի Ավշի-օղլին,— Անմահական ջուր
ու Անմահական խնձոր եմ ուղում:

— Դե՛ որ ըտենց ա,— կասի Արծիվը,— վե կունես օխտը տիկ
ջուր, օխտը բուդ միս. կնստես միջքիս, ես քեզ կտանեմ Անմահա-
կան ջրի ու խնձորի կուշտը. որ քրուա կանեմ՝ ջուրը կքցես, լողո՞ւ
կանեմ՝ միսը, մինչև կէթանք տեղ կհասնենք:

Ըտենց Ավշի-օղլին ա՝ միսն ու ջուրը վե կունի օխտը տիկ՝ ու
կնիւնի Արծիվի միջքին. Արծիվը կթռնի, լողո՞ւ կանի՝ Ավշի-օղլին
միսը կքցի, քրուա կանի՝ ջուրը, մինչև կէթա էփեջա տեղ. բիրդան
ճամփին մի բուդ միսը վե կքցի Ավշի-օղլին: Իրա բուդը կկտրի, հա-
ղիր կանի, հենց Արծիվը լողում կանի՝ Ավշի-օղլին իրա բուդը կքցի:
Արծիվը կտենա, որ շատ աղի ա, կդնի լնդերի տակը, կպահի: Ավշի-
օղլուն կասի.— Աչքերդ պինդ խփի՛, քեզ էլ դալիմ պահի՛, հրե՛ս,
էս մենե՛ սարը տեսնում ես՝ պտի ճղվի, մննենք սրա մեջը:

Ավշի-օղլին դալիմ կըռնի, ու Արծիվը ընե՛նց բարձր կթռնի,
որ սաղ աշխարը Ավշի-օղլու աղաքին մըջմի շանք էր էրեւում: Բիր-
դան Արծիվը վե կգա մի՛ սառը քշքշան աղբրի դրաղ, որ էլ չեմ կա-
րա ասի. ընե՛նց մի շալիր-չիման տեղ, ընե՛նց մի բաղշա, որ էլ
ի՛նչ ասեմ. էնքա՛մ խնձորներ, էնքա՛մ խնձորներ, որ Ավշի-օղլին
մնացել էր շշմած:

Արծիվն էն սհաթը իրա լնդի տակի բուդը կհանի, կդնի Ավշի-

օղլու վրա, իրա բմբուխը կպռկի, կթաթախի Անմահական ջրի մեջ-
կքսի Ավշի-օղլու ոտին, էն սհաթը ոտը էլի կսաղանա:

Արծիվը Ավշի-օղլուն կասի.— Հրե՛ս Անմահական ջուրը, հրե՛ս
Անմահական խնձորը, ինչքա՛մ կուզես կե՛ր ու վե կա՛լ:

Ավշի-օղլին մի բոլ խնձոր կլցնի ջրեքը, ծոցեքը, մի կուշտ
ինքը կուտի, Անմահական ջրիցն էլ վրեն կխմի: Մի կուժ էլ Անմա-
հական ջուր կլցնի ու էլի կնստի Արծիվի միջքին: Արծիվը կրեքի Ավշի-
օղլուն իրանց երկրի սնոռումը վե կգնի, մի բոլ էլ շնորհակալու-
թյուն կանի, որ իրա ճուտերին Վիշապի ձեռիցը պրծացրեց. հեննեն
սմնաս բարո՞վս կանի, կէթա իրա ճուտերի կուշտը:

Ավշի-օղլին էլ ուրախ-ուրախ Անմահական ջրի կուժը կգնի ու-
սին ու յա՛լլա՝ կկրննգի դադ թագավորի ամարաթը: Կէթա դո՛ւզ թա-
գավորի աղաքին գլուխ կտա, Անմահական ջրի կուժն ու ծոցի խըն-
ձորենքը կհանի, կգնի թագավորի աղաքը:

Թագավորը, իրա նազիր-վեզիրը. էս որ կտենան, շատ կղարմա-
նան, թե սա ո՛նց գնաց ըսենց թեզ Զուրն ու խնձորը գտավ բերեց:

Թագավորը կասի.— Տղա՛, գնա՛ դինջացի, էգուց արի ի՛նչ ես
ուզում՝ տա՛մ սրա տեղակ:

Համա ա՛րի նազիր-վեզիրի սրտիցը խարար տուր: Սրանք էր-
կուան էլ շատ միտք կանեն, շատ միտք կանեն, թե յարար մենք
ո՞րդե պտի սրան ճամփենք, որ էթալն ընի, գալը չըլնի: Ըտենց
միտք կանեն, միտք կանեն, բիրդան մտնեքը կընկնի, որ չեմս թա-
գավորը մի շա՛տ սիրուն աղջիկ ունի: Լավ կըլնի, որ թագավորին
սրեն՝ Ավշի-օղլուն ղրկի չեմսի աղջկանը բերի. զաթի որ թագավորը
ղրկի, էլ Ավշի-օղլին եղ էկողը չի: Դուզ կէթան թագավորի կուշտը:

— Զես ասի՛, թագա՛վորն ապրած կենա, ի՛նչ ենք միտք արե,—
կասեն նազիր-վեզիրը:

— Ի՛նչ,— կհարցնի թագավորը:

— Որ Ավշի-օղլին ըտենց դոչաղ ա, շատ լավ կըլնի, որ ղըր-
կենք էթա՝ չեմսի թագավորը մի սիրուն աղջիկ ունի, ղրկի թո՛ղ էթա
էն աղջիկը բերի քեզ հմար. էսթավոր ամարաթին ընենց հուրի-մա-
լաք թագուհի ա պետք,— ուրախ-ուրախ կասեն նազիր-վեզիրը:

— Դե որ ըտենց ա, ղրկեք, Ավշի-օղլին թող գա՛, — կասի թա-
գավորը:

Հաթի նազիր-վեզիրին էլ հենց էդ էր պետք. մարդ ղրկեցին
Ավշի-օղլու եննուցը:

Ավչի-օղլին կգա, զլուխ կտա Թաղավորին, կասի.— Էլի ի՞նչ ես հրամայում, Թաղավորն ապրած կենա:

Թաղավորը կասի.— Որ ըսքան բանը բերեցիր, իմ ամարաթը դարդարեցիր, մնաց, որ էթաս, Լեթաս Լեթասի Թաղավորի աղջկան էլ բերես ինձ Թաղուհի, նոր են վախտը ի՞նչ ուզում ես՝ կտա՛մ ու էլ ինձ բան չի մնա պակաս:

Ավչի-օղլին դառը-տխուր կգա, մորը նաղլ կանի Թաղավորի հրամանը:

Մերը կասի.— Դու արխեին կաց, դժար հրամանները քոմմա կատարել ես, հմի զրանում ի՞նչ կա, որ դարտ ես անում: Կէթաս Թաղավորիցը օխտը ձեռք դափ ու զուռնա, մի քանի հատ էլ լավ գլամի կուղես, քոմմըքի հաղին էլ ոսկե շորեր ըլնի: Վե կունես կէթաս Ֆլա՛ն ծովը. գլամիքը կնստեր, կէթաք դո՛ւզ ծովի մեջտեղը: Հենց ծովի միջին էդ Թաղավորի ամարաթն ա, նրանք համեշա ընտեղ շրի միջին են ապրում, ըսկի իսանի էրես շեն դուս գալի: Ածիլ կտաս, Թաղավորի աղջիկը դուս կգա անկաջ անելու. հենց դուս էկավ թե չէ, վե կալ դի գլամին ու փախեր եդ:

Ավչի-օղլին ա՛՝ էլի առավոտը թեղ վե կկենա, կէթա՛ Թաղավորի ամարաթը. նի կմենի նեքսե, Թաղավորին խոր զլուխ կտա, կասի.— Թաղա՛վորն ապրած կենա, ինձ օխտը ձեռք լավ դափ-զուռնա հրամայի տան. քոմմըքի հաղին էլ ոսկե շորեր ըլնի հազած, մի քանի հատ էլ լավ գլամի:

Թաղավորը էն սհաթը կհրամայի, Ավչու-օղլու ուզածները քոմմա կտան:

Ավչի-օղլին օխտը ձեռք դափ-զուռնեն վե կունի, կընկնի ճամփա: Կէթա, կէթա, կէթա, լի՛ս կէթա, մո՛ւթ կէթա, ըսենց օխտը շարաթ ճամփա կէթա, աստու զորությունովը կհասնի մոր ասած ծովին:

Էն սհաթը կհրամայի՝ կամանց գլամիքը քոմմա ոսկով կզուրեն կհաղրեն, իրանք էլ ոսկե շորները կհագնեն, կնստեն, գլամիքը կըջեն դալա ծովի մեջտեղը: Շատ կէթան, քիչ կէթան, աստու առջան, կհասնեն լափ ծովի մեջտեղը. նո՛ր ըստե Ավչի-օղլին գլամչըքանցը կաննացնիլ կտա գլամիքը, դափը-զուռնեն ածիլ կտա:

Էդ դափը-զուռնաչիքն են՝ մի ընե՛նց դայդեք կածեն, մի ընե՛նց դայդեք, որ սաղ ծովի ձկներին, շանավարներին մղկտացնիլ կտան. մարդ ըսկի ո՛նչ ուզում էր ուտի, ո՛նչ խմի, հենց նստի

դրանց ածելուն լսի: Ըսենց կածեն մի օր, էրկու օր, մըն էլ կտենան՝
էն թագավորը դուս էկավ ջրի էրեսը, հայիլ-մայիլ էլավ էդ զուռ-
նաչքանց ածելուն: Մի սաղ թամամ ամիս էդ դափը-զուռնաչիքը
կածեն գյամըքանց միջին, համա էդ թագավորն էլ ո՛նչ ուտում էր,
ո՛նչ խմում, հա լսում էր դրանց:

Դե՛ հո մի սաղ ամիս սոված չէ՞ր կարա մնա. զնաց տուն՝ հաց-
մաց ուտի ու էլի դուս գա լսի, տնեցիք հարցրին.— էսքան վախտ
ո՞ւր իր գնացե:

Թագավորը կասի.— Ըսե՛նց, ըսե՛նց, ըսե՛նց բան, ծովի վրա,
չեմ գիտա որդիան են էկե էդ դափը-զուռնաչիքը. ընե՛նց են ածում,
որ մարդի միտք ո՛նչ ուտիլն ա գալի, ո՛նչ խմիլը:

Թագավորի աղջիկը էս որ կլսի, կզարդարվի, կզուգվի, դուս կգա
ծովի էրեսը, որ ինքն էլ լսի: Խեղճը հենց դուս գալը կիմանա՝ էն
սհաթը Ավլի-օղլին վրա կպրծնի, վե կունի թագավորի աղջկանը ու
գյամըքանցը կհրամայի, որ քշեն դպա իրանց երկիրը:

Ըսենց կգան, կգան, շատն ու քիչը աստոծ գիտա, օխտը շա-
քաթվա վրա կհասնեն իրանց երկիրը:

Ավլի-օղլին ուրախ-ուրախ աղջիկը վե կունի կտանի թագավորի
ամարաթը:

Թագավորը. էս աղջկանը որ կտենա, շատ կուրախանա, վե
կկենա Ավլի-օղլու ճակատը կպաշի, էդ աղջկանն էլ կտա Ավլի-օղ-
լուն: Նո՛ր Ավլի-օղլուն թագավորը կղրկի իրա մոր եննուցը:

Ավլի-օղլին ուրախ-ուրախ կէթա մորը քոմմա գլխի անցկացա-
ծը նաղ կանի, ոնց որ ես ձեզ նաղ արի, նոր վե կունի, կրերի թա-
գավորի ամարաթը:

Նո՛ր ըստե օխտը օր, օխտը զշեր հարսանիք կանեն, լավ ուրա-
խությունով Ավլու-օղլուն կպսակեն: Ինչ քե՛ֆ, ինչ ուրախությո՛ւն,
էն օխտը ձեռք դափը-զուռնեն էլ ածիլ կտան:

Դե դաթի թագավորն էլ հալիվորեւ էր, կրերի Ավլի-օղլուն էլ
իրա ձեռքովը կկարգի թագավոր, որ իրանից եղը Ավլի-օղլին երկիրը
կառավարի:

Խեղճ նազիր-վեզիրն էլ կտենան, որ իրանց մտքի շատ բաները
քամին տարավ, իրանք էլ կգան Ավլի-օղլուն գլուխ վե կրերեն: Ավ-
լի-օղլին էլ նրանց կրաշխի:

Նրանք հասան իրանց մուրադին, դուք էլ հասնեք ձեր մու-
րադին:



3. ՀԱՎԱՏԱՐԻՄ ԿՆԻԿԸ

Ժամանակով մի աղքատ մարդ ա ըլնում, ունենում ա մի կնիկ:
էդ կնիկը շատ սիրուն ա ըլնում: Էդ մարդը էնկա սիրունությունի
խաթեր մոտիցը չի հեռանում:

Կնիկն ասում ա.— Ա՛յ մարդ, բո՛լ ա նստես, մեր էրեխեքը սո-
ված կոտորվեցին, վե՛ կաց, դնա աշխատանք արա՛, բե՛, մեր էրե-
խեքը սոված չմեռնեն:

Մարդն ասում ա.— Չե՛մ էթա:

Ասում ա.— Ընչի՞ հմար չես էթում:

Մարդն ասում ա.— Վախենում եմ քեզանից:

Ասում ա.— Ա՛յ մարդ, մի՛ վախենա, վե կաց, դնա՛: Աստված
թող միջնորդ ըլնի մեր միջին, մինչանք քու էթալը գալը ես որձե-
ղենի էրես շտկնամ:

Մարդը համոզվում ա, վեր ա կենում, ասում ա.— Դո՛ւ ըլնես
քու կաթը, ես ո՛ր դնացի, դո՛ւ գիտաս,— ասում ա, ընկնում ճամ-
փա, էթում:

Մեկ օր, էրկու օր, իրեք օր էթում ա, էթում, դուս գալի մի քա-
ղաք: Ըտեղ սկսում ա աշխատանք անիլ:

Կնիկը դուռը շինում ա՝ մարդն էթալուց եղը, մննում ա նեքսև:
Ունենում են ապրուստ. մի վախտ ուտում են, դալիս ա հատնում ա
ուտելիքը:

Կնիկն ասում ա.— Ա՛յ աստված, դուս շեմ կարա գա, նեքսե շեմ կարա գա, ո՞նց պահեմ իմ էրեխեքը:

Էրեխանց սովածությունը որ շատ ախտում ա, սկսում են լաց ըլնիլ, թե՛ «Սոված մեռանք, մեզ հա՛ց»:

Մերը, իլլաջը կտրվում ա, բերում ա օջախը վառում, պղինձը ջուր ա լցնում, դնում օջաղի վրա, քարերը քցում ա մեջն ու սկսում ա խառնիլը:

Էրեխեքն ասում են.— Սոված մեռա՞նք, թե էփեց, տո՛ւ, ուտենք:

Մերն ասում ա.— Լա՛վ, հլա շի էփե, համբերե՛ք:

Շատ ասելուց եղը մերը խաբում ա ըդոնց, քնելու վախտը դալիս ա՛ քնում են: Էգսի օրն էլ ըտենց ա անում, խաբում ա, քնացնում: Իրեք օր ըտենց անց ա կենում: Իրեք օրից եղը տերը հրեշտակին ղրկում ա աղքատի գեյմով, որ գա էդ կնկա հավատարմությունը փորձի:

Հրեշտակը գալիս ա աղքատի գեյմով կես գշերին դուռը ծեծում ա:

Կնիկն ասում ա.— Ո՞վ ես:

Ասում ա.— Ղարիբ մարդ եմ, մի տեղ տո՛ւ, էս գշեր գամ քնեմ:

Կնիկը նեքսեիցն ասում ա.— Զիլնի՛, ես մենակ օղլուշաղ եմ, չիլնի, որ մարդ գա իմ մոտը:

Ասում ա.— Ա՛ստու սիրու խաթեր, բաց արա դուռը, գամ էն դռան տակին վեր ընկնեմ քնեմ, լիմը բացվի, էթամ:

Կնիկն ասում ա.— Ա՛նկարելի բան ա:

Մարդն ասում ա.— Ինչ որ ուզես կտամ, թաքիլան դուռը բաց արա:

Կնիկն ասում ա.— Իմ քաշովը մին ոսկի էլ տաս, դուռը բաց շե՛մ անի:

Հրեշտակը թողում ա էթում: Իրեք օր իրար վրա գալիս ա, կնիկը դուռը բաց չի անում: Էթում ա հրեշտակը՝ տիրոջը հայտնում ա էդ կնկա պնդությունը: Տերը հրամայում ա, որ ինչքան քնի՛ մի քիսա ոսկի գլխատակին ըլնի:

Քնում ա էդ կնիկը իրիկունը, առավոտը վեր ա կենում, բարձր վեր ա ունում, տենում ա, որ մի քիսիկ բան բարձի տակին դրած ա, ասում ա.— Ա՛ստված, էս քիսեն ո՞վ բերեց դեց իմ գլխատակը:

Վեր ա ունում քիսիկը, բաց անում բերանը, տենում ա, որ լիքը ոսկի, ասում ա.— Փա՛ռք քեզ, ա՛ստված, իմ էրեխանց առաջին հասցրի:

Մի ոսկի հանում ա տալի մենծ տղին, ղրկում բազար, ասում
ա.— Ա՛յ որդի, դնա՛ հաց առ, ուտելիք ա՛ռ, տենանք աստված ի՞նչ
դուռ ա բաց անում:

էդ տղեն էթում ա բազար, մերն ինչ որ թամբա՛ ա անում, առ-
նում ա, բերում ա տուն. ուտում են, իրանց հմար ապրում: Ընդուց
դենը ըլնում ա սովորական, ամեն օր մի քիսա ոսկի վերնում ա զըլ-
խատակիցը: Էնքան ոսկի ա կիտում, որ հաշիվը կորում ա:

էդ կնիկը մի հավատարիմ քարեկամ մարդ ա ունենում, ղրկում
ա մենծ տղին, կանչում ա. էդ մարդը գալիս ա, գալիս ա՝ էդ կնիկը
նեքսե շի առնում, ինքը նեքսեն ա մնում, մարդը գրսեը:

Մարդն ասում ա.— Ի՞նչ ես ասում:

Ասում ա.— Գնա՛ քաղաքից դրսե, տես ամայի տեղ կա՞, ա՛ռ,
փողը տամ, ինձ հմար շենլիկ շինա՛:

էդ մարդը դուռ ա գալի քաղաքիցը, առնում ա էդ կնկա ասած
տեղը, գալիս ա էդ կնկա մոտը, կնիկն ասում ա.— Գնա ուստեք բռ-
նա, մի ամառաթ շինա՛, որ թագավորիցը լավն ըլնի:

էդ մարդը էթում ա, ուստեք ա բռնում, ֆահլեք ա բռնում, սկը-
սում շինելը: Շինում ա ընենց մի բան, որ ոչ մի երկրում չի ըլնում
ըսենց շենք:

Գալիս ա էդ կնկա մոտն, ասում ա.— Շինեցի, հազրեցի, փո-
ղերը տո՛ւ, տանեմ տամ ուստեքանցն ու ֆահլեքանցը:

Կնիկը տալիս ա փողերը, ասում ա.— Տար տո՛ւ, եդ դառ, արի
իմ կուշտը:

էդ մարդը տանում ա փողերը բաժանում ա, գալիս ա էդ կըն-
կա մոտ:

էդ կնիկն ասում ա.— Ա՛ռ էս փողը, դնա տան մեջ առ:

էթում ա առնում ա, գալիս ա էդ կնկա մոտը, ասում ա.— Ամեն
բան հազիր ա:

էդ կնիկը հանում ա մի բուռ ոսկի տալիս ա էդ մարդին, ասում
ա.— էս էլ քեզ փեշքաշ, դնա՛:

էդ մարդը թողում ա, էթում: Ինքը քաշվում ա էդ տները, առ-
նում ա ոչխարներ, առնում ա կովեր, առնում ա գոմշեր, առնում
ա ձիանիք, առնում ա դավեր, ընենց որ ապրանքի շափ ու սահ-
մանը կորչում ա:

Դրա տեղը տենում ա, բախում ա. «էս կնիկը ո՞րդիան հավա-
քեց ըսքան ապրանքը. կա, չկա՞ դա բողոթյուն ա անում»:

Օխտը տարի անցնում ա, էդ կնկա մարդը գիր ա ղրկում, թե.
«Գալիս եմ»։ աղպորն էլ ա ղրկում, կնկանն էլ։

Գալիս ա էդ մարդը հասնում, ասենք էրևան, աղպերը վեր ա
կենում, ասում ա.— էթամ աղպորս կուշտը, կնկա արածները ասեմ
իրան։

էթում ա, աղպորը պատմում ա, թե.— Դու որ ընտեղ իր, օրեն
հացի կարոտ իր, հմի կնիկդ՝ գնա, տե՛ս ի՞նչ կարողություն ա թոփ
արե, էլ նոր տուն շինի՛լ, էլ ոշխար, կով, ձի առնի՛լ։

Մարդն ասում ա.— Ո՞րտեղան ա սռե։

Աղպերն ասում ա.— Դու շն՝ս գիտա՝ որտեղան ա առե. քեզ
խաբեց, ղրկեց ղարբություն, ինքն սկսեց լրբություն անիլ, օրական
հարուր մարդ գալիս ա, հարուրն էթում, ըտենցությունով էլ հավա-
քեց էդ կարողությունը։

էդ կնիկը կանչում ա իրա քավորակնկանը ասում ա.— Մարդս
գալիս ա, քավորակի՛ն, արի ձիանիքը նստենք, էթանք աղաքը։

Ձիանիք են նստում, էթում մարդի աղաքը։ Ճամփեն մինչև
կեսն էթում են, մարդը պատահում ա իրա աղպոր հետ. ըտեղ հարց
ու բարով են անում, էդ մարդն ու կնիկը եդ են ընկնում։ Քավորա-
կինն ու տեգրը աղաք են ընկնում, գալիս են։

Քավորակինը ասում ա.— էս ա օխտը տարի ա, իրար չեն տե-
սե, թող իրար հետ խոսալուս գան, մենք աղաք-աղաք էթանք։

էդ մարդը կնկանը վեր ա բերում ձորի մեջը, ձիուցը վեր ա բե-
րում, շլինքը կտրում, շարսափը քաշում վրին, թողում, ձին նստում
գալի, աղպորը հասնում։ Գալիս են իրանց տունը, կնկա մարդը
տենում ա, ի՞նչ կարողություն՝ հաշիվ, սահման չկա, ասում ա.
«Դրուստ էր իմ աղպոր ասածը»։

Մի էրկու շաբաթ մնում ա, էդ մարդի ոշխարն էլ ա սատկում,
կովերն էլ, գոմշըններն էլ, վերջը էլ բան չի մնում. մի օր էլ սեւաֆը
գալիս ա, լցվում ա դրա ամարաթների մեջը, ամարաթներն էլ
քանդվում ա, ընենց որ էդ մարդը դառնում ա օրեն հացի կարոտ։

Տղեն վեր ա ունում ասում ա.— Իմ մերն ո՞ւր ա։

Ասում ա.— Մերդ լրբություն էր արե, ըտքան կարողությունը
թոփ էր արե, դրա համար էլ սըպանեցի։

— Իմ մերն,— ասում ա,— ինչ դու գնացել իր, տանիցը դուս
չէր էկե, շաբաթներով մենք սոված ինք մնում տան միջին, նա
պղինձը դնում էր օջաղի վրա, շուրը լցնում էր մեջը, քարերը քցում

մեջը, մեզ ըստով խաբուամ, քնացնում: Մի մարդ իրենք օր իրար վրա էկամ, աստու սերը դրեց՝ իմ մերը դուռը բաց շարեց, ասեց, որ. «Նս իմ մարդի հետ ուխտ ու պայման ունեմ, մինչև իմ մարդի գալը ես որձևդենի էրես պտի շտենամ»: Ըդուց դենը իմ մերը քնում էր, մի քիսիկ ոսկի գլխատակիցը առավոտը վեր էր ունում: Թոփ էլավ ահագին ոսկի, իմ մերը կանչեց Ֆլա՛ն մարդին, տվեց՝ նա շինեց ամարաթը: Կուղես էդ մարդին կանչա, հարցրա, տես՝ մարս էրեսը տեհե՞լ ա:

Կանչեց էդ մարդին, հարցրեց:

Էդ մարդն ասեց.— Վա՛լ քու տունը քանդվի, քո՛ւ շինքը կտորոյի, դու ո՛նց ղըմըշեցիր, էն թավուր կնկանը սըպանեցիր, նա ինձ որ կանչեց էդ ամարաթները շինելու, իմ էրեսը դուս չէկավ, փողը տալիս էր տղիդ, տղեդ բերում էր տալիս ինձ: Ինչ որ ասել են քեզ՝ սուտ են ասե:

Էդ մարդը նո՛ր տալիս ա գլխին, ոնենբրին, թե՛ ես իմ ձեռովը իմ տունը քանդեցի:

Խարարը տանք կնկանիցը:

Մարդը որ կնկանը սըպանում ա, աստու հրամանով դրա բերնիցը մի աղբուր ա դուս գալի, վազում: Ընտեղ էլ բազրկյանի յուրդ ա ընում, էդ բազրկյանը գալիս ա, բեռները վեր ա ածում, տենում ա, որ քառասուն տարի ինքը բազրկյան էր, ըտեղ ջուր չէր տես, հմի աղպուրը գալիս, անց ա կենում:

Ասում ա.— Յավա՛շ, էթամ տենամ էս աղպրի աղը:

Էթում ա, տենում ա, որ մի կնիկ պառկած ա, շարսափը վրին բաշած, բերնիցը աղպուրը դուս ա գալի: Զարմացած նստում ա, թամաշ ա անում: Մեկ էլ տենում ա, հրես էրկու մուկ դուս էկան բնիցը, իրար հետ հաղ արին, եղով մի մուկը վե կալավ մի խեցատի կտոր, դրեց էն մկան շինքը կտրեց, թողաց ընտեղ, ինքը փախավ, մտավ իրա բունը: Մի քիչ մնաց, էդ մուկը բնիցը էկավ, գնաց էդ կնկա բերնիցը դուս էկած ջրիցը բերեց, մկան գլուխը դրեց տեղը, էդ ջրիցը քսեց, կնկա կողքին քուլեր էր դուս էկե, գնաց մի քու պոկեց, բերեց տվեց էդ մկան պնչին, մուկը սաղացավ, ընկան իրար իննուց՝ փախան, մտան իրանց բունը:

Բազրկյանն ասեց.— էս ի՞նչ հրաշք էր՝ ես տեսա:

Վե կացավ, էդ կնկա շինքը դրեց տեղը, էդ ջրիցը քսեց, լա-

վացալ յարեն, գնաց էն քուլիցը քաղեց, տարալ դրեց էդ կնկա պնչին, կնիկը փռշտաց, վե կացալ նստեց: Թամաշ արեց է՛ս դիհը, է՛ն դիհը, տեհալ, որ մոտին բազրկյանը կաննած ա, շարսափը էլի քաշեց իրա գլխին:

Բազրկյանն ասեց.— Դրուստ որ հում կաթնակերին էյթիւրար չկա. ես ըսքան շարշարվեցի, ազատեցի քեզ, հմի դու ինձանից էրեւորդ պահում ես:

Կնիկն ասեց.— Դու բազրկյան ես, համբերություն ունեցի, ըսքան վախտ ա ըստեղ սոված, ծարալ վեր ընկած եմ, էթանք շագիրդ, մի քիչ հաց տո՛ւ՝ ուտեմ, կշտանամ, էն վախտը դու իմն ես, էս քունն եմ:

Բազրկյանը վե կացալ, կնիկն էլ հետը՝ գնացին. ճամփին բազրկյանը ուզեցալ ձեռը քցի ճտովը, թշերը պաշի, կնիկն ասեց.— Ամո՛թ ա, համբերի:

Գնացին շագիրդ, հաց բերին, հաց կերան, պրծան, բազրկյանը կնկանն ասեց.— Դե՛, — ասեց, — ես քունն եմ, դու իմն ես:

Կնիկն ասեց.— Համբերի՛, մի դուս գամ դրսև, նոր գամ, զաթի ես քունն եմ, դու իմն ես:

Կնիկը դուս էկալ դրսև, շարսափը վե կալալ քցեց մի վարդի թփի վրա, ինքը փախալ:

Բազրկյանը շատ թամաշ արեց, տեսալ կնիկը չէկալ, դուս էկալ դրսև, տեհալ, որ շարսափը քցած ա ընտեղ, գնաց շարսափը քաշեց, ասեց.— Վե՛ կաց էթանք:

Տեհալ, որ կնիկ չկա: Նդ դառալ փոր ու փռշման էկալ շագիրդ: Նորքարներին կանչեց, ասեց.— էս էլած չէլածը ձեզ փեշքաշ, ես էթում եմ:

Ասեց.— Աշխարքը քանի շեն ա, ես պտի ման գամ էդ կնկա Բենուցը:

Ասեց, գնաց:

Գանք, կնկանիցը սալըդ տանք:

Կնիկը գնաց հասալ մի շորանի, ասեց.— Բարո՛ւլ քեզ, շորան աղպեր: Ինձ մի կտոր հաց տո՛ւ ուտեմ, սոված եմ:

Չորանը հանեց պարկիցը հաց դրեց, մի ոշխար կթեց, դրեց կնկա աղաքը: Չորանը սկսեց էդ կնկա հետ հանաք անիլ:

Կնիկն ասեց.— Հաց ուտեմ, պրծնեմ, զաթի ես քեզ հմար եմ էկե ըստեղ, դու իմն ես, ես քունն եմ:

Կնիկը հաց կերամբ պրծամբ, շորանին ասեց.— Դե գնա, ոչխարդ ցվրովել ա, համաքա՛, բե՛:

Չորանը գնաց ոչխարը համաքելու, կնիկը փախամբ:

Չորանը տեհամբ, որ կնիկը փախնում ա, թողաց. ոչխարը, ընկամ կնկա քամակը: Կնիկը տեհամբ, որ շորանը ընկել ա եննուցը, էն ա, պտի հասնի իրան, մի գետ կար, գնաց էդ կնիկը, ջանի դարդիցը իրան քցեց գետի մեջը: Չորանը էկամ տեհամբ, որ կնիկ չկա, ոչխարը տարամբ գեղը, տվեց տիրոնը, ինքն ասեց.— Աշխարքը քանի շեն ա, պտի ընկնեմ էս կնկա եննուցը, ման գամ:

Դանը, խարարը տանք կնկանիցը:

Դա որ ընկամ գետը, շուրը քշեց տարամբ. տարամբ բանդ արեց մի ջաղացի նամի: Ջաղացպանը մի հալիվոր մարդ էր, տեհամբ, որ ջաղացի շուրը կտրվեց, վե կացամբ գնաց, տեհամբ՝ մի կնիկ նամին բանդ էլած: Բռնեց էդ կնկա թեիցը, ջրիցը դուս հանեց, տեհամբ, որ էդ կնիկը հլա չի մեռե, վե կալամբ, տարամբ ջաղացը, էդ կնկա ուշը բերեց վրա: Կնիկը դարթնեց, տեհամբ, որ ջաղացի մեջն ա, մի հալիվոր մարդ զլխավիրեր կաննած ա:

— Է՛,— ասեց,— ա՛փի, սոված եմ, մի կտոր հաց բե, ուտեմ, ըստուց դեն դու ինձ՝ հեր, ես քեզ՝ աղջիկ:

Մնաց էդ ջաղացպանի մոտին: Քնեց. լիսը բացվեց, տեհամբ մի քիսիկ ոսկի զլխատակին դրած ա: Ընդուց դենը դառամբ սովորական, օրը մի քիսիկ զլխատակիցը վեր էր ունում. ընթան կիտեց, որ հաշիվը կորամբ:

Օրերի մի օրն ասեց.— Ափի՛, գնա ուտեք բե՛, ըստեղ շենլրկներ շինենք, ամբարներ շինենք, ցորեն համաքենք:

Հալիվորը վե կացամբ գնաց բազար, բռնեց՝ ֆահլեք, ուտեք, բերեց, սկսեց էդ շենլիկը շինիլ: Շենլիկը շինեց վերջացրեց, ամբարներ շինեց, ցորեն առամբ, կիտեց: Եղով գնաց էդ կնկա հմար մի ձեռք տղամարդի շորեր առամբ, բերեց, տվեց էդ կնկանը: Կնիկը հաղամբ, դառամբ մի սիրուն տղամարդ: Մի քանի տարուց եղբ սով ընկամ էդ երկրի մեջ: Էդ կնիկը հալտնեց ամեն տեղ, թե. «Յորեն ունեմ, բաժանում եմ, թե հարուստ, թե աղքատ, ով ուզում ա, գա տանի»:

Ձենը հասամբ ըղոնց, թե ըսենց մի մարդ ցորեն ա բաժանում

մուֆթա, էրկու աղպերն էլ վե կացան, ասեցին.— Է՛թանք, մենք էլ բերենք, սովամահ էլանք:

Ըդոնք վե կացան, ճամփա ընկան, գնացին:

Գանք, սալըղը տանք բազրկյանիցն ու շոբանիցը:

Ըդոնք էլ լսեցին, որ անփող ցորենն են բաժանում, վե կացան էկան էդ մարդի մոտը:

Էդ կնիկը, որ տենում ա էդ մարդկերանցը, ճանանչում ա, որ իրա բազրկյանն ու շոբանն են:

Տեղ ա տալիս, ասում ա.— Նստե՛ք, շատ մարդիկ կան, պըրծնեմ, նոր ձեզ տամ ցորեն, տարե՛ք:

Մի էրկու օրից եղը, դալիս ա իրա մարդն ու տեգըր: Մտնում են էդ կնկա մոտ, գլուխ են տալի, կաննում են: Կնիկը ճանանչում ա, համա ծանոթություն չի տալի, իսկ ընդոնք չեն ճանանչում:

— Դե՛հ,— ասում ա,— զնացեք էն օթախումն էլ դուք նստեք, մինչև վերջացնեմ էս մարդկերանցը, նո՛ր ձեզ էլ ցորեն տամ, զնացե՛ք:

Մնում ա մինչև իրիկուն, քոմմա մարդկանցը ճամփու ա դնում, կանչում ա բազրկյանին, շոբանին, իրա մարդին ու տեգորը:

— Է՛,— ասում ա,— ո՞ր երկրիցն եք դուք,— հարցնում ա էդ կնիկը:

Բազրկյանն ասում ա.— Ծս Ըսպըհանցի եմ:

Չոբանն ասում ա.— Ծս Ջալալցի եմ:

Նդով հարցնում ա իրա մարդին.— Դո՞ւ որտեղանցի ես:

Ասում ա.— Ծս էլ էրեանցի եմ:

Տեգորը հարցնում ա.— Դո՞ւ որտեղանցի ես:

Ասում ա.— Սա իմ աղպերն ա, էրկուսս էլ էրեանցի ենք:

Էդ կնիկը վեր ա ունում, ասում ա.— Բազրկյա՛ն, դու շատ տեղեր ես ման էկե, գլխովդ շատ բան անցկացած կըլնի, երկար զշեր ա, պատմա՛, անկաջ անենք:

Բազրկյանն ասում ա.— Պատմեմ: Ծս մի դարմացք բան տեհա: Էս քառասուն տարի բազրկյանություն ի անում, ըդենց բան չէի տեհե: Տարվա մի տարին ինձ մի յուրդ ունեի, էկա ըտեղ բեռներս վե դնելու. բեռներս վե դրեցի, տեհա, որ ջուր ա դալի էդ ձորովը, Անմահական ջուր, ասի՛՝ չէս ա քառասուն տարի ես բազրկյան եմ,

ևս չէի տեսնուի ըստեղ շուրձ. նոքարներին ասեցի. «Դուք չաղըները տվե՛ք, ես էթամ, տենամ»¹ էս շուրը ո՞րտեղան ա գալի»։...

— Բա էդ կնկանը տանելու վախտը ըսկի թուշը չպաշեցի՞ր,— հարցրեց էդ կնիկը բաղրկյանին։

Բաղրկյանն ասեց.— Երկի՛նք, գետի՛նք, ծո՛ւլ, ցամա՛ք, շթո՜ւց ձեռ տալ, ոնց որ իմ քիրը, իմ մոտիցը հեռացավ, էն օրվանից ընկել եմ էդ կնկա եննուցը ման եմ գալի, որ մեկ էլ էրեսը տենամ, չեմ գտնում։

— Լա՛ւ,— ասեց կնիկը,— հմի էլ, քո՛ւրդ, դու ասա՛։

— Է՛,— ասեց,— աղա ջա՛ն, իմ դարդը շատ ա. էդ կնիկը ինձ ուստ էկավ եղո, էկավ ասեց. «Հաց տո՛ւ, սոված եմ»։ Հաց տվեցի կերավ, ուղեցա ձեռս քցեմ շլընքովը, պաշեմ, ասեց. «Համբերա՛, հացս ուտեմ պրծնեմ, գաթի ես քեզ հմար եմ էկե»։ Հացը կերավ պրծավ, ասեց. «Չորա՛ն, ոչխարդ ցրվել ա, գնա՛ հավաքա իրար վրա»։ Ես մինչու գնացի ոչխարը հավաքելու, թամաշ արի տեսա՝ էդ կնիկը փախնում ա. թողացի ոչխարը, ընկա էդ կնկա քամակը։ Է՛ս լանը, է՛ն լանը, մի վարար գետ կար, էդ կնիկը իրան քցեց էդ գետի մեջը, թողացի եղ դառա ոչխարիս մոտը փոք ու փոշման, տա՜րա ոչխարը տվեցի իրա տիրոնը, ասեցի. «Աշխարհը քանի շեն ա, պտի ընկնեմ էդ կնկա եննուցը, ման գամ. հլա ման եմ գալի, չեմ կարում գտնի»։

էդ կնիկը վե կալավ ասեց.— Չորա՛ն, դու սարի քուրդ, էն կընկանը չպաշեցի՞ր, ձեռ չտվի՞ր։

Ասեց.— Չէ՛, աղա՛, աստվա՛ծ, երկի՛նք, գետի՛նք, շթողաց, էն օրվանից էլ ընկել եմ քամակը, պտըտվում եմ, չեմ գտնում։

Մարդը բռնող ինքն իրան մտածում ա.— էս կա, չկա, իմ կնիկն ա, յարար սա՞ղ ա, թե մեռած։

Ասեց.— Ա՛յ մարդ, դու էլ քու զլխի էկածը պատմա՛,— մարդին ա ասում։

Ասեց.— Աղա ջա՛ն, զլխի՛դ, արևի՛դ մեռնեմ, ի՞նչ ասեմ, դարձերս շատ ա, չեմ կարա։

Ասեց.— Է՛լի հենց, ասա՛։

Ասեց.— Ասե՛մ, աղա։ Մեռնի էս աղպերր. էս աղպերը արեց, որ իմ տունը քանդվեց, ընդունը որ պատմում ին, էդ իմ կնիկն ա։

¹ Այսպես մանրամասն պատմում է ամբողջ եղելությունը (Մ. Բ.)։

— Բա խի՞ իր սըպանում քու կնկանը:

— Ես գնացել ի դարբություն, գալիս ի, աղպերս էկավ աղաքս-
թե. «Մեր տանըցիք, կնիկս, էրեխեքս ո՞նց են», հարցրի աղպորս,
նա վե կալավ ասեց, թե. «Օրական հարուրը գալիս են կնկանդ կուշ-
տը, հարուրը էթում են, եքա հարստություն ա թոփ արե լրբությու-
նովը»: Եդո էկանք, ճամփին կնիկս էկավ առաջս քավորի կնկա
հետ, հարց ու բարով արինք իրար հետ, ընդոնք ընկան աղաք աղ-
պորս հետ, ես ու կնիկս եդ մնացինք, եդով կնկանս վեր բերի էդ
ձորի մեջը, շըլինքը կտրեցի, շարսավը քաշեցի վրեն, ձիս քշեցի,
գնացի հասա աղպորս ու քավորակնկանս: Գնացինք տուն: Գնա-
ցինք տուն, հարց ու փորձ արի, տեհա, որ անմեղ ա իմ կնիկը, նո՛ր
գլխիս տվեցի, ոնենբրիս տվեցի, էլ ո՛րդի՝ կնիկ շեմ կարա գտնի:

էդ կնիկը վե կալավ ասեց.— Որ էդ կնկանը տենաս, կճանան-
չե՞ս:

Ասեց.— Բա չե՞մ ճանանչի:

Կնիկը գնաց մտավ նեքսե, աղամարդի շորերը հանեց, իրա
շորերը հագավ, հալիվորի հետ էկավ ըզոնց մտին կանեց:

Բաղրկյանը ըտեղան հասավ, որ փաթըթվի, շորանը ընտեղան
հասավ, որ փաթըթվի, մարդը շոգեց, ընկավ ոնենբը, ասեց.— Կնի՛կ,
վիրե՛ աստված, ներքե՛ դու, ես արել եմ, դու մի՛ անի:

Բռնեց էդ շորանին էլ ցորեն տվեց, բաղրկյանին էլ տվեց.—
Դե՛հ,— ասեց,— գնացե՛ք, աստված ձեզ հետ:

— Դե՛,— ասեց,— ա՛յ մարդ, ես էլի քու կնիկն եմ, քու աղ-
պոր դիվանը քու ձեռովն արա:

Աղպերը բռնեց աղպորը թութունի պես կոտորեց, լցրեց գետի
մեջը, ասեց.— Գնա՛, ձկնեբրին բաժին ի՛լ:

— Ա՛յ մարդ,— ասեց կնիկը,— դե վե կաց գնա էրեխեքը բե՛,
ըստեղ ուտենք, խմենք կյանք վայելենք:

Մարդը գնաց էրեխեքանցը հավաքեց, բերեց ըտեղ, հալիվորի
հետ մի տեղ ապրեցին մինչև իրանց մահը:

Դրանք հասան իրանց մուրադին, դուք էլ հասնեք ձեր մու-
րադին:

Աստծուց իրեք խնձոր ընկավ, մեկն՝ ասողին, մեկը՝ լսողին,
մեկն՝ անկաջ ղնողին:

4. ՕՀԱՆԵՍԻ ՀԵՔԻԱԹԸ

Ժամանակով մի մարդ կար, ըտրան ուներ վեց տղա. մենծ տղի հետ էթում էր, ցախ էր քաշում, բերում էր ծախում:

Մենծ տղեն մի օր ասեց.— Ես պտի տանեմ ցախը, քուշերը ման ածեմ:

Տարավ, Մի կնիկ գուռ էկավ տանիցը, շատ հարուստ էր, էդ տղին տեհավ, աչքն ընկավ էդ տղին, շատ հավանեց:

— Ա՛յ տղա, ցախդ բե՛, ես կառնեմ:

Ասեց.— Ի՞նչ ածի:

Ասեց.— Ի՞նչ սիրտդ կուզի, տո՛ւր:

Հանեց մի մանեթ փող տվեց:

Ասեց.— Քեզ հեր, մեր ունե՞ս:

Ասեց.— Ո՛ւնեմ:

Ասեց.— Աղպեր էլ ունե՞ս:

Ասեց.— Հինդն էլ տանը կա:

Ասեց.— Հերդ ի՞նչ բանի ա:

Ասեց.— Հերս էլ ա ցախ քաշում, բերում. ենք, ծախում:

Ասեց.— Հորդ էլ ասա՛, էրկսով էլ ցախը բերեք ըստեղ, էրկսիդ ցախն էլ կառնեմ:

Տղեն վե կացավ, գնաց: Տեհավ՝ հերը հլա ցախը չի ծախե, ասեց.— Ա՛յ հեր, ես տարա տվի մի մանեթի, էզուց ես էլ, դու էլ էրկսով տանենք, ըստեղ ծախենք:

էգսի օրը ցախն առան, գնացին ընտրանց տունը: Էդ կնիկը հանեց մի-մի մանեթ փող տվեց ամենքին, ասեց.— էս տղին շնորհախի, ես առնեմ:

Ասեց.— Էթամ մորիցը հարցնեմ, էգուց պատասխան կրերեմ:

Ասեց.— Մի կոտ ոսկի կտամ քու տղին, էգուց գալուս մի-մի շըլակ էլ ցախ վե կալեք բերեք, մի-մի մանեթ էլ փող կտամ:

Թողացին, գնացին:

Գնացին տուն, կնկանը հարցրեց, ասեց.— Ա՛յ կնիկ, մեր տղին մի կոտ ոսկի են տալի, կարող ա մեզանից էլ լավ պահի, մի բան որ տանը հինգը կա, արի՛ տանք:

— Տա՛նք, զաթի դու էլ հալիվորել ես, շես կարում աշխատի, մի կոտ ոսկի կառնես, հա՛մ դու լավ կապրես հա՛մ քու տղեքը:

Ասեց.— Շա՛տ լավ ես ասում, ա՛յ կնիկ:

Էգսի օրը ցախը վե կալան հեր ու տղա գնացին: Երոր ցախը վե դրին, հանեց էրկու մանեթը տվեց, ասեց.— Տղիդ տալի՞ս ես:

Ասեց.— Տալիս եմ:

Մի կոտ ոսկի շահեց, լցրեց ջվալի մեջը, ասեց.— Դե տար կե՛:

Տղին վե կալավ, մի շոկ օթախ տարավ. մարդ դրկեց, մի լավ վարժապետ կանչեց, հախը բարըշեց, ասեց.— Լա՛վ ուսում պտի տաս իմ տղին:

Վեց ամսից եղը խանութը էդ տղին հարցրեց.— Ո՞նց ա ուսում մըդ, լա՛վ ա:

Ասեց.— Շա՛տ լավ ա:

Ասեց.— Կարաս քեզնու գլուխ մի դուքան բաց անի, առըտուր անի:

Ասեց.— Շա՛տ լավ:

Էդ կնիկը մի քանի հաղար մանեթ տվեց, տղեն գնաց դուքան բռնեց, ապրանք առավ, սկսեց առըտուր անիլը: Մի օր, էրկու օր եդը, տեհավ՝ մուշտարին շատացավ, մի պրիկաշչիկ բռնեց: Մի քանի օր արանքը անց կացավ, տեհավ՝ մի պրիկաշչիկը չի կարում օգտիցը դա, էրկու իրեքի էլ բռնեց, համարյա տասնէրկու պրիկաշչիկ պահեց: Սաղ քաղաքը զարմացավ դրա առըտուրի աշողության վրա:

Խարարը տանը էդ կնկա մարդիցը:

Էդ մարդն էլ առըտուրական էր, երոր իրա դուքանը նստած

միշտդին՝ էս ու էն էթում ին Օհանեսի դուքանը մտիկ ին անում,
դա էլ վե կացավ, դնաց:

Երոր մտավ դրա դուքանը, բարե տվեց, տղեն վե կացավ, ա-
սեց.— Տղե՛ք, ըսկամի տվե՛ք, թո՛ղ նստի հերս:

Ինքը ճանանչում էր էդ մարդին, միևսկ հերը չէր ճանանչում
դրան:

Մըխելի նստելուց եղը, հաց բերին, ասեց.— Հայրի՛կ, ա՛րի
հաց ուտենք:

Ասեց.— Շնորհակալ եմ, ես նոր հաց կերա, ո՞նց ա, որ ըսքան
եղի եք հաց ուտում:

Ասեց.— Ի՞նչ անենք, տենում ես, մաշալ չի ըլնում:

Էդ մարդը նստում ա, հաց ուտում, շնորհակալ ըլնում, էթում:

Իրիկունը կնկանը ասում ա.— Ըսօր դնացել ի Օհանեսի դուքա-
նը, լավ պատիվ տվեց, շատ լավ տղա ա, լավ էլ գործ ունի, էրնակ
յա ըտենց տղա ունենալինք, յա ըտենց փեսա, էլ աշխարքի տակին
դարդ չինք ունենա:

Կնիկն ասեց.— Էգուց շարաթ ա, կարաս, կանչա դա՛ մեր տու-
նը, ես կհամոզեմ, մեր աղջիկը կտանք:

Ասեց.— Չի՛ դա, անծանոթ տղա, խի՞ ա դալի:

Ասեց.— Դու ասա՛, բալթիմ էկավ, կանչում ես պատիվ տալու,
հո ուրիշ բանի հմար չե՞ս կանչում:

Առավոտը գշերով կնիկը դնաց Օհանեսի օթախն, ասեց.
— Իրիկվա ժամերի վախտը որ հերդ կգա քու դուքանը, կասի.
«Էթանք մեզ ղոնաղ», մի քիչ շեմ-չում կանես, նո՛ր վե կկենաս,
իրար հետ կգար: Երոր էկար տուն, ոնց որ անծանոթ, ինձ հետ
կրարեկես, Շուշանիկի հետ էլ կրարեկես, ընենց որ հերդ կարծիք չա-
նի, թե դու բստեղ ապրել ես:

Տղեն վե կացավ, դնաց դուքան: Իրիկունը, ժամերի վախտը էդ
մարդը դնաց Օհանեսի դուքանը, բարե տվեց, էլի հրամայեց պրի-
կաշիկներին, թե՛ ըսկամի տվե՛ք, հայրիկը նստի:

Մի սհաթ քիմի նստեց, ասեց.— Խնդրում եմ էս իրիկուն էթանք
մեր տուն, մի քիչ խոսանք:

Ասեց.— Էս իրիկուն շարաթ իրիկուն ա, պտի հաշիվ տենանք,
ո՞նց դամ:

Ասեց.— Հաշիվը էգուց կտենաք, էկե՛ք էթանք:

Ասեց.— Շա՛տ լավ, է՛թանք:

Վե կացան, գնացին: Երոր հասան ժամի դուռը զանգերը տվեց, մարդն ասեց.— Մտնենք, մի էրկու ծունդը գնենք, էթանք:

Մտան եկեղեցի, եղ թամաշ արեց տեհավ, որ իրանց հարևանի տղեն էթում էր տուն, ասեց.— Ա՛ռ քեզ մի աբասի, գնա խանըմին ասա. «Աղեն Օհանեսին բերում ա»:

Տղեն վազեց, գնաց:

Մի էրկու ծունդը դրին, վե կացան գնացին: Գնացին տուն, բարե տվին, կնիկը բարեն առավ, նստացրեց, սկսեցին խոսալը: Չայ բերին՝ խմեցին, հաց բերին՝ կերան, տղեն վե կացավ էթալու, կնիկը մի դհիցը, մարդը մի դհիցը կախ ընկան փեշիցը, թե.— էս վախտ ո՛ւր ես էթում, էս գշեր ըստեղ կաց, առավոտը կէթաս:

Տղեն շկացավ, էլի գնաց իրա օթախը, պառկեց:

Առավոտը մարդ ու կնիկ շատ թեզ վե կացան, մարդն ասեց.— Մի լավ պատրաստություն տե՛ս, էդ տղին լավ պատվենք:

Կնիկն ասեց.— Լավ կպատվենք, եդո ես կասեմ. «Ա՛րի, մեր աղջիկն ա՛ռ»:

Ասեց.— Քու էրեսը ո՛նց պտի բռնի:

Ասեց.— Կասեմ:

Կնիկը գնաց տղի օթախն, ասեց.— Հմի որ շայ կխմենք, կպըրծենք, ես կասեմ, թե. «Օհանես՛ս, իմ Շուշանիկը պտի տամ քեզ», դու մի քիչ թաշախուստ ծախա. երոր մենք կզոռենք, ասա՛ լա՛վ:

Վե կացավ լվացվեց, էկավ, նստեցին, շայ խմեցին:

Կնիկն ասեց.— Օհանես՛ս, տենո՛ւմ ես՝ իմ աղջիկն ինչքա՞ն սիրուն ա, պրի իմ աղջիկը տամ քեզ, ըլնես իմ փեսեն:

Օհանեսը մտիկ տվեց Շուշանիկի էրեսին, տեհավ՝ շատ սիրուն ա, սիրտը կպավ, համա ասեց.— Չէ՛, հլա իմ վախտը չի, հլա տասնէրկու պրիկաշշիկ ունեմ, շինեմ քսանշորսը՝ նո՛ր:

Մարդը վե կալավ ասեց.— Ինչքան փող ես ուզում տանք. փա՛ռք ասու, ըսքան կարողություն ունեմ, մի աղջիկ:

Տղեն ասեց.— Շա՛տ լավ, որ ուզում եք՝ ես էլ կառնեմ:

էն սհաթը նշան տվին, մի հինգ, տասն օրից եղը պսակեցին: Երոր հարսանիքը պրծան, տղեն գնաց, որ աղջկա ծոցին քնի, շորերը հանեց, տեղաշորի միջին նստեց, աղջիկն էկավ կողքին կաննեց. մի «ա՛խ» քաշեց:

Տղեն ասեց.— Խի՞ «ախ» քաշեցիր:

Ասեց.— Ընե՛նց, միտս մի բան ընկավ, «ախ» քաշեցի:

Ասեց.— Պատի՛ ասես, թե խի՞ չախ՞ քաշեցիր, թե չէ՞ շորերս հագնում եմ:

Աղչիկը նարը կտրվեց, ասեց.— Ես մի միլիոնչու աղչիկ, դու մի շոփչու տղա, ո՞նց իրար առանք:

Տղեն ասեց.— Ես հլա քու ծոցը շնամ մտեմ, դու էդ խոսքը ինձ տանցի՞ր,— վե կացա՛վ, շորերը հագա՛վ, ասեց,— դե՛, մնաս բարո՞ւ, դե՛, միլիոնչու տղի ա՛ռ:

Վե կացա՛վ, գլուխն առա՛վ; զնաց: Թե մեկ օր զնաց, թե հինգ օր զնաց, հասա՛վ մի քաղաք:

Խարարը տանք աղչկանիցը:

Աղչիկը ընթան լաց էլա՛վ, որ աշքերը կոկոնեց, ուռեց, նստած տեղը քնեց: Առա՛վտուր վե կացա՛վ մերը, տեհա՛վ, ո՞նչ աղչիկն ա դուս գալի, ո՞նչ տղեն:

Մարդն ասեց.— Ա՛յ կնիկ, զնա տես՝ ի՞նչ էլան, կանչա՛, գան՝ չա՛յ խմենք:

Գնաց, մտա՛վ աղչկա օթախը, տեհա՛վ աղչիկը շորերը հագին, քիթ ու բերնի վրա ընկած ա:

— Աղչի՛, աղչի՛:

Աղչիկը դարթնեց, տեհա՛վ, որ մերն ա:

— Օհանեսն ո՞ւր ա:

Ակսեց լաց ընիլ: Նո՛ր պատմեց մորը թե՛ էս խոսքը ասեցի, տղեն խռովեց, զնաց: Էրկու բամփ տվեց աղչկա գլխին, թե.— Բեմուրադ մեռնես, խի՞ էդ խոսքը ասեցիր: Դու շտեհա՛ր՝ ես ի՞նչքան ոսկի տվի առա, ի՞նչքան շարշարվեցի, ուսումի տվի, բիրադի քեզ հմար, դու խի՞ իր էդ խոսքն ասում:

Հերն էլ իմացա՛վ, շատ բարկացա՛վ վրեն, համա էլ անց էր կացն: Մարդը չորս մարդ բռնեց, է՛ս յանը, է՛ն յանը ղրկեց, որ ման գան, դռնեն, բերեն:

Խարարը տանք Օհանեսիցը:

Երոր Օհանեսը հասա՛վ մի քաղաք, զնաց մի դայֆաշու դուքան, բտեղ մախսուղ լիզուն լալացրեց, մի գիր գրեց, թե. «Ղայֆա բե՛ր»: Բերեց՝ խմեց:

Խմելուց եղը, մի գիր գրեց, ասեց. «Ես քեզ կլնեմ պրիկաշչիկ»:

Ասեց.— Դու լալ, ո՞նց պտի մուշտարու հետ խոսաս:

Ասեց.— Բա՛ն չկա, կխոսամ:

— Դե՛, դու գիտաս,— ասեց,— ի՛լ¹:

Եբոր էլա՛վ պրիկաշչիկ, ընթան մուշտարի թափեց էդ դայֆեն,
որ մաշալ չէր ընեում հաց ուտեին:

էդ Օհանեսին ման էկող տղեքանց մեկը՝ ման գալով՝ էկա՛վ
Օհանեսին գտավ, ասեց.— Բարո՛ւ, աղա՛:

Օհանեսը շնոսաց ըսկի, ինչքան արեց, շնոսաց:

Ղայֆաշին էկա՛վ ասեց.— էդ տղեն լալ ա, չի խոսում:

— Ո՞նց թե լալ ա, տասնէրկու պրիկաշչիկ ունի, ինքը միլիոն-
շու փեսա:

էկան ըտի մառջ էկան՝ հինգ օրվա միջին թե խոսացրեց, հինգ
հարուր մանեթ դայֆաշուցն առնի, թե չկարացա՛վ՝ հինգ հարուր մա-
նեթ ինքը տա:

Հինգ օր գնաց-էկա՛վ, գնաց-էկա՛վ, ինչքան խնդրվեց՝ չէլա՛վ,
շնոսաց. հինգ օրը թամմեց, հինգ հարուր մանեթ դայֆաշին առա՛վ,
ինքը փոր ու փոշման եդ գնաց, ասեց.— Կէթամ հազար մանեթ
կրերեմ, կխոսացնեմ:

Գնաց պատմեց Օհանեսի անորը, ասեց.— Ես կէթամ, կրերեմ:
Աները վե կացա՛վ էկա՛վ Օհանեսի կուշտը, տեհա՛վ՝ շատ ուրախա-
ցա՛վ, ուզեց խոսացնի, շնոսաց:

Ղայֆաշին էկա՛վ, ասեց.— էդ մարդը լալ ա, ի՞նչ եք ուզում էդ
մարդից:

Ասեց.— Զէ՛, իմ փեսեն ա, լալ չի՛:

Ասեց.— Կուզես մառջ գանք, լալ ա:

Մառջ էկան հազար մանեթի վրա, հինգ օր ժամանակի:

Աները շատ աշխատեց, որ խոսացնի՝ շնոսաց: Ղայֆաշին հինգ
օրը թամմելուց եդո գնաց, թագավորին գանգատվեց. թագավորը
հազար մանեթ առա՛վ էդ մարդիցը, տվեց դայֆաշուն: էդ մարդը եդ
դառա՛վ, էկա՛վ տուն, կնկանն ու աղջկանը պատմեց, թե.— Ընտեղ
էր, հա՛մ չկարացի խոսացնի, հա՛մ էլ չէկա՛վ —:

Աղջիկը խնդրվեց հորը, թե.— Ես էթամ, բալթի բերեմ:

Հերը փող տվեց աղջկանը. աղջիկը վե կացա՛վ, գնաց: Գնաց
հասա՛վ մարդի մոտը, բարով տվեց՝ բարովը շառա՛վ. շինքը թեքեց,
կաննեց կողքին, ինչքան խոսաց՝ շնոսաց:

Ղայֆաշին ընդիան էլի էկա՛վ, տեհա՛վ էդ աղջկանը, ասեց.—
Հա՛լ ա, լա՛լ, էս մարդը:

¹ Եդիք (Մ. Բ.):

Աղշիկն ասեց.— Ի՞մ նշանածն ա, ո՞նց թե լալ ա:

Ղալֆաշին ասեց.— Էս քանի ամիս ա իմ մոտին ա կենում, լալ ա:

— Իմ նշանածն ա, ես գիտամ, որ լալ չի:

Ղալֆաշին ասեց.— Քեզ հինգ օր ժամանակ, թե խոսացրիր՝ քեզ հաղար մանեթ փող տամ, իմ գլուխն էլ թող կտրվի, թե չխոսացրիր՝ հաղար մանեթ դու տաս, քու գլուխն էլ կտրվի:

Կնացին թաղավորի մոտ, պայման արին: Պայման արին, էկան. աղշիկը շատ աղաչեց ու լաց էլավ, տղեն չխոսաց:

Հինգ օրը թամմեց, ղալֆաշին զնաց թաղավորի կուշտն, ասեց.— Մեր ժամանակը ըսօր թամմել ա:

Թաղավորը աղջկանը կանչեց, ասեց.— Էգուց գլուխդ պտի կըտրեմ, ճարդ տենում ես, տե՛ս:

Աղշիկը փոր ու փոշման վե կացավ էկավ տղի մոտ, էլի լաց էլավ, ասեց.— Չէ՞ ես քու նշանածն եմ, անտեղի խի՞ ես իմ գլուխը կտրիլ տալի, ես մեղքը չե՞մ, ես քեզ ի՞նչ եմ արել:

Տղեն բան չխոսաց: Մնաց էն էգսի օրը, թաղավորը կանչեց հա՛մ աղջկանը, համ ղալֆաշուն: Բաղմուժյունը ըմմա էկել էր թամաշ անկու: Տղեն մտածեց, որ աղջկանը անպատճառ պտի խեղտեն, զնաց եղևիցը, թաղավորին գլուխ տվեց, կանչեց. տե՛հավ տաբաղաջը հաղրել են, պտի խեղտեն, մի գիր գրեց տվեց թաղավորին, թե.— Կես սհաթ ինձ ժամանակ տո՛ւ, եղո խեղտա:

Թաղավորը ժամանակ տվեց. տղեն էկավ, ման էկավ, մի փուշ պոսոր առավ ու զնաց, ձեռը մեկնեց թաղավորին, ասեց.— Ա՛ռ, թաղավորն ապրած կենա, էս պոպոքը տո՛ւ էդ աղջկանը:

Նրոր բիրադի տեհան, որ տղեն հանկարծ խոսաց, ըմմեքն էլ մնացին շիվարած:

Թաղավորը ասում ա տղին.— Էդ խի՞ քանի ամիս ա չիր խոսում, հմի խոսացիր:

Ասեց.— Քանի ամիս ա չի խոսում, չունքի էդ աղշիկն ինձ ասեց, թե. «Ես մի միլիոնչու աղշիկ, դու մի շոփչու տղա, ո՞նց էկանք իրար առանք»: Իս էլ ինադ արի, էլ չխոսացի, գլուխս առա, էկա էս կողմը: Հմի էլ իրավունք չունի խոսալու, չունքի մի փուշ պոպոքով եմ առել սրա արինը:

Թաղավորը հասավ դրա ճակատը պաչեց, ասեց.— Ղո՛շաղ տղա ես, քու թառըրին կեր շարիր:

Ղայֆաշին մոլորած կաննած էր, թե իրա գլուխը պտի կըտ-
րիլ տա:

Թագավորը հարցրեց տղին.— Հմի Ղայֆաշու գլուխը կտրե՞մ:
Ասեց.— Չէ՛:

Ղայֆաշին տղիցը շնորհակալություն արեց, գնաց:

Թագավորը տղին պարգևներ տվեց, տղեն շնորհակալություն
արեց, վե կալավ կնիկն ու գնաց: Գնաց, հասավ իրա անոր տունը.
Թազադան օխտն օր, օխտը գշեր հարսանիք արին:

Դրանք հասան իրանց մուրազին, ով որ կարոտ ա՛նա էլ հասնի
իրա մուրազին:

Աստանից իրեք խնձոր ընկավ, մինն՝ ասողին, մինը՝ լսողին,
մինն էլ՝ անկաջ դնողին:





5. ԶԱԴՈՒ ՊԱՌԱՎ

Ընում ա, շի բլնում մի աղբատ մարդ: Էդ աղբատը շատ ոսկի ա ունենում հավաքած, իրա շորերի միջին կարած:

Օրերի մի օրը գալիս ա մի քաղաք, մի խոլվաթ տեղ ա ընում, թամաշ ա անում է՛ս յանը, է՛ն յանը, տենում ա մարդ չկա, ասում ա. «Յավա՛շ, հանեմ իմ փողերը համբրեմ, տենամ՝ ի՞նչքան առ:

Դու մի ասի, մի պառավ կնիկ աչքը սրա վրին ա. տենում ա, որ էս աղբատ մարդը հանեց ոսկիքը, համբրեց, էլի դրեց իրա տեղը, կարեց:

Պառավը գնաց էդ աղբատի յախեն բռնեց, ասեց.— Բա՛րե քեզ, ա՛յ մարդ, ըսքան վախտ ո՞րդի իր, դու իմ մարդն ես:

Աղբատն ասեց.— Ա՛յ կնիկ, դու հո սատանա չէիր, էկար իմ յախեն բռնեցիր, ինձ ո՞ւր ա կնիկ:

Պառավն ասեց.— Չէ՛, որ չէ՛, դու իմ մարդն ես, ո՛ր իմ մարդն ես:

Տվեցին, կռվեցին, վե կացան գնացին դատավորին դանդառ:

Դատավորն ասեց.— Ա՛յ հալիվոր, դա որ քեզ առնում ա, դու էլ ա՛ռ, վեր ընկի, էլ ի՞նչ ես ընենց ման գալի. դա կաշխատի, քեզ կպահի:

Պառավը էդ մարդին վե կալավ, տարավ տուն:

— Վա՛յ,— ասեց,— իմ աչքերը քոռանա, ա՛յ մարդ, էս ի՞նչ

կեղտոտ շորերի մեջ ես, հանա՛ մի լվանամ, լեղացնեմ քեզ, թա-
մուզ հագի:

Հալիվորը հանեց շորերը, տվեց պառավին: Պառավը շորերը
տարավ լվաց, ոսկիքը հանեց, շորերը փռեց պարանի վրա, ինքը
թողաց, փախավ:

Հալիվորը շատ թաժաշ արեց, թե պառավը պտի գա, տեհավ
որ պառավը չկա, ասեց.— Զա՛նըմ, էս պառավը ո՛ւր գնաց, մի դուս
գամ, տենամ:

Ըսեղ ոսկիքը միտն ընկավ, գնաց շորերը ման էկավ, տեհավ,
որ ոսկի չկա, է՛ս յանը պառավ, է՛ն յանը պառավ, պառավ չկա՛:

Հալիվորը գլխին տվեց, ոտին տվեց, ասեց.— Իլլա՛ չկա, պա-
ռավը իմ տունը քանդեց, տարավ իմ ոսկիքը: Յավաշ ընկնեմ դրա
եննուցը, բալքի գտնեմ:

Գանք, պառավիցը սալըդ տանք:

Պառավը գնաց դուս էկավ մի քաղաք, ընկավ մանգալոն գնաց,
մի հարուստ մարդի ակուշկի տակին կաննեց: Տան տղամարդը տա-
նը չէր, մենակ կնիկն էր, շատ սիրուն օղլուշաղ էր:

էդ կնիկը թաժաշ արեց ակուշկիցը, տեհավ, որ մի պառավ կան-
նել ա, ասեց.— Ա՛յ պառավ, խի՞ ես կաննել:

Ասեց.— Պա՛ռավը դուրբան ըլնի քեզ, ի՞նչ անեմ, անտեր օղ-
լուշաղ եմ: Մոռնաթ եմ անում՝ մի տեղ տա՛ս, սըթրվեմ, քու որդ-
կերանց սաղաղիցը: Մի կտոր հաց կուտեմ քու տանը, քեզ էլ ծա-
ռայություն կանեմ առանց փողի, քանի սաղ ու կենդանի եմ:

էդ կնիկը դրան տարավ նեքսե, հաց տվեց՝ կերավ, տեղ տվեց՝
քնեց: Մի վախտ մնաց, օրվա մեկ օրը էդ կնիկը պառավին ղրկեց
բազար բանի:

Պառավը գնաց բազար, բան էր առնում, ընդիան մի մենծ բա-
զըրկյան կանչեց, ասեց.— Ա՛յ պառավ, իմ աչքը էն կնկա վրին ա,
ի՛նչքան փող որ ուզում ես՝ կտամ, թաքիլան մի գշեր, մի հնար
անես, գամ նրա մոտը:

Պառավն ասեց.— Իրեք հարուր մանեթ տո՛ւ, կես գշերին կգաս:
Բազըրկյանը փողերը տվեց. պառավն առավ, գնաց տուն: Մնաց
գշերը քնեցին, կես գշերին էդ բազըրկյանը էկավ, դուռը ծեծեց, պա-
ռավը վե կացավ, դուռը բաց արեց:

Կնիկն ասեց.— Պա՛ռավ, էդ ի՞նչ մարդ ա:

Ասեց.— Ը՛սկի, մեր երկրացի մեր բարեկամներից ա, էս գշեր մնա, առավոտը վե կենա է՛թա:

Ասեց.— Ձի՛լնի, դրսի մարդ խի՞ ես նեքսն բերում:

Պառաւր շատ մոռնաթ արեց, թե իրա բարեկամն ա, գա, իրա օթախումը քնի:

Կնիկն ասեց.— Որ բռնեց ա, թո՛ղ գա, քու օթախումը քնի:

Պառաւր էդ մարդին տարաւ իրա օթախումը քնացրեց: Գշերվա մի վախտը էդ մարդն ասեց պառավին.— Բա ի՞նչ ես անում:

Ասեց.— Ի՛նչ պտի անեմ, ես ասել եմ իրան, շորերդ հանա՛, դնա մոտը:

էդ բաղրկյանը հանեց շորերը, դնաց էդ կնկա մոտը: Ջանը՛մ-սան պառավ, վե կալաւ էդ մարդի շորերը, սհաթը, քամարը, տննա-մանները, դուռը շինեց, փախաւ:

էդ բաղրկյանը մտաւ էդ կնկա կուշտը, կնիկը վախեցաւ, ասեց.— Խի՞ ես էկե իմ օթախը:

Ասեց.— Դու էս ասե, որ էկել եմ:

— Ես ո՞ւմ եմ ասե:

— Պառավին: Պառավը ինձանից իրեք հարուր մանեթ առաւ, որ քու կուշտը բերի:

— Վա՛յ, անիծած պառավ,— ասեց,— էս ի՛նչ օյին էր իմ գլուխը հանեցիր,— ասեց, վաղեց պառավի օթախը, տեհաւ, որ ո՛նչ պառավ կա, ո՛նչ բաղրկյանի շորերը:

Ղալմաղաւն ընկաւ մեջները, հարեանները էկան հաւարի, բաղրկյանը ճարը կտրած շապիկ-ոտաշորով թողաց փախաւ:

Կիսը բացվեց, էդ կնիկը շառ ձեն տալ տվեց, թե՛ ըսենց մի պառավ էս օյինը հանեց իմ գլուխը՝ բռնե՛ք: Ձեն տվեցին. դու մի ասի՛ էդ ոսկու տեր հալիվորն էլ բռեղ ա էկել հասել:

էդ հալիվորն էլ դնաց էդ կնկա մոտը, ասեց.— Վա՛յ խանում, գլխիդ, արեիդ մեռնեմ, էդ կնիկն իմ ոսկիքն էլ առել ա տարել, ընկել եմ կնուցը, ման եմ գալի:

Պառավին բռնեցին, բաղրկյանն էլ էկաւ, վե կալան դնացին թաղավորի կուշտը դանդառ: Գնացին հասան թաղավորի ամարաթ-ները, մտան հայաթը, թաղավորը տեհաւ, որ հրե շորս հոգի էկան, մեկը ջահել կնիկ, շատ սիրուն, մեկը պառավ, էրկուան էլ տղա-մարդիկ:

Թաղավորի աչքն ընկաւ էդ կնկանը: Պառավը կամանց-կա-

մանց մոտացավ թագավորին, ասեց.— Թագավոր, խի՞ ես ըտքան
թամաշ անում մեզ:

Ասեց.— Բա ինչ անեմ, քու տունը քանդվի, ըտքան էլ սիրուն
կնիկ կըլնի՞:

Ասեց.— Թագավոր, էդ իմ աղջիկն ա, ի՞նչ էս տալի, որ տամ
քեզ:

Ասեց.— Ինչ որ քու սիրտը ուզում ա՝ կտամ:

Ասեց.— Իրեք հարուր մանեթ փող տո՛ւ:

Հանեց թագավորը իրեք հարուր մանեթ տվեց պառավին. պա-
ռավն ասեց.— Թագավոր, դե մի ճամփա շանց տուր, որ աղջիկս
ինձ շտենա, չլաց ըլնի քամակիցս:

Թագավորն ասեց.— էս ակուշկովը դուս արի, փախի՛, թող
շտենա քեզ:

Պառավը ակուշկովը դուս էկավ, փախավ: Թագավորը կանչեց
էդ կնկանը, ասեց.— Ես քեզ քու մորիցը առա՛, դու իմն ես:

Կնիկն ասեց.— Ի՞նչ մեր: Նա դիտա՛ս ի՞նչ օյիններ ա հանե
մեր գլուխը, մենք էկել ենք նրանից դանգատ:

Նոր թագավորը դե՛ս, դե՛ն.— Բռնե՛ք էդ պառավին, բռնե՛ք:—
Բռնեցին, բերեցին:

Բերեցին. թագավորը վե քցեց պառավին, ընքան տվեց, որ մե-
ռավ. փաթաթել տվեց մի քելի մեշ, կանչեց իրա զաթըրընքանցը,
ասեց.— Տարե՛ք, սրան քցեք ծովը:

Հաթըրընքը դրեցին զաթրի վրեն՝ տարան, քիչ էր մնում, որ
հասնեին ծովի դրաղը, պառավի ուշն էկավ վրա, վե կացավ, նըս-
տեց: Հաթըրընքը զարմացան:

Պառավն ասեց.— Գնացե՛ք, թագավորին աչքալիսեք տարեք,
թե ձեր մերը սաղացավ, էկեք, տարեք. ես վասյաթ ի արել, որ մեռ-
նելուս ինձ ծովը քցի:

Հաթըրընքը վե կացան, գնացին թագավորի մոտը. ասեցին.
— Թագավոր, աչքդ լիս ըլնի, մերդ սաղացել ա, ասում ա թող գան,
ինձ տանեն:

Թագավորն ասեց.— Վա՛յ, ձեր տունը չքանդվի, գնացեք, տե-
հեք՝ ի՞նչ էլավ, բռնեք բերե՛ք:

Գնացին տեհան՝ ո՛նչ պառավ կա, ո՛նչ էլ զաթիր: Պառավը
զաթըրները լցրել էր գյամին, ծովն անց էր կացել էն էրեսը: Հաթըր-
ընքը թողացին, փոր ու փռշման եդ դառան:

Թագավորն ասեց.— Ի՞նչ էլավ պառավը:

Ասեցին.— Թագավորը սաղ ըլնի, մինչանք մենք գնացինք, զաթրոնները լցրել էր գլամին, թողել փախել:

Թագավորն ասեց էգ կնկանն ու մարդկանցը.— Իմ գլուխն էլ էս օյինը հանեց, թողաց փախավ՝ ի՞նչ կարանք անի:

Թողացին փոք ու փոշման՝ աղքատը գնաց իրա բանին, բա-
ղրիկյանը թողաց գնաց իրա բանին, կնիկն էլ գնաց իրա բանին:





6. ԿԵՂՏԱԿԵՐ ՄԱՐԴ

Կըլնի, շիլնի մի¹ մարդ: Էս մարդը ընե՛նց մի կեղտակեր, ղալիմ մարդ ա ըլնում, ընե՛նց մի հախվերմաղ, որ էլ չեմ կարա ասի. դրուստ որ կոպեկի հմար ֆոգի էր տալի: Մի ուրիշ մարդ զալիս ա, սրա հեննա ընկեր ա դառնում, մի քանի տարի էրկսով առուտուր են անում: Մի քանի տարի որ անց ա կենում, էս մարդը միտք ա անում՝ սրանից բաժանվի, իրա համար ջուկ առուտուր անի:

Գալիս ա էդ հախվերմաղ մարդին ասում.— Ա՛ղպեր, ա՛րի մեր ունեցածը փայ անենք, բոլ ա՛ ինչքամ ընկեր էլանք:

— Լա՛վ,— ասում ա էդ ձեռիցը ղալիմ մարդը,— ա՛րի փայ անենք:

Կրերեն՝ ի՛նչ ունեին, շունեին, էսքամ տարի ի՛նչ աշխատել ին, քոմմա փայ կանեն. էդ հախվերմաղը մի աբասի կմնա ընկորը պարտ: Ըսենց անց կկենա մի օր, էրկու օր, իրեք օր, մի շաբաթ. հա՛ ընկերը կուզի, սա շի տա՛ ըսօր, էգուց կքցի, որ աբասին ուտի, չտա:

Էս ընկերը՝ որ կտենա ճար, իլլաջ շիլնում, շի կարում իրա պարտքն առնի, կասի. «Է՛մի էլ էթամ տուն, բալի իրա օղլուշաղիցը ամանի, տառ:

¹ Գրառման ձեռագրում այս բառը բացակայում է, հավանաբար վրիպված է (Մ. Կ.).

Օրեհն մի օրը վե կկենա, կէթա էդ Կեղտակեր մարդի տունը: Գուռը կծեծի, կնիկը դուս կգա:

— Մարդդ տա՞նն ա,— կհարցնի:

— Հա՛, տանն ա,— կասի կնիկը:

— Մի ա՛սա դուս գա, բան եմ ասում:

Կնիկը կէթա, մարդին կասի, թե.— Ընկերդ քեզ կանչում ա:

էդ հախվեքմազը՝ էս որ կիմանա, ալբիալը կֆահմի, թե բանն ընչումն ա, կասի. «Հալբաթ էկել ա իրա արասին առնելու: Նննա կնկանը կասի.— Գնա՛, ասա՝ «Մարդս մե՛ռել ա»:

Կնիկը կթողա, կէթա քուլեն:— Ա՛յ աղպեր,— կասի,— բա չես ասի՞ մարդս միղաֆիլ վեր ա ընկե, մեռե, չեմ գիտա՝ ի՛նչ անեմ:

— Բաս որ ըտենց ա,— կասի ընկերը,— դու ջուր տաքացրա, ես էլ էթամ տերտեր բերեմ, լեղացնենք, տանենք ժամ: Օղո՛րմի իրան, մի արասիս կերավ:— Կասի ու կէթա տերտեր կանչելու:

Դրա ընկերը էթում ա, տերտեր ա բերում: Ընկերը գլխի էր ընկե, թե բանը ընչումն ա. բերում ա լավ տաքացրած ջրով մեռելին լեղացնում ա, եննա կտավ ա՝ բերում, որ պատանի: Պատանելու վախտը մի ասեղ պատանին էր տալի, տասը՝ մեռլի ջանին: Ըսենց էդ սուտ մեռելը էս շարշարանքին էլ դիմացավ, բալբի մի արասին չտա: Պատանում են պրծնում, դնում են դուբուրի մեջը, տանում ժամ: Որ ժամավորի ոտքը խաղաղվում ա, ընկերը ինքն իրան ասում ա. «Սա պտի իմ մեռած ընկորը բուսումն պահեմ, տենամ՝ վերջը ի՛նչ ա ըլնում»: Ուսուղով մննում ա ժամի միջին մի տալդա տեղ, տափ ա կենում:

Հենց էդ գշերը թագավորի խաղինեն գողերը կտրել ին բերե ժամ, որ փայլ անեն: Էդ գողացած բաների միջին էլ մի լավ, թանկագին թուր ա ըլնում: Էդ թրի վրեն գողերը կռիվ են անում. միսն ասում ա, թե. «Լավ թուր ա»: «Մեկելն ասում ա. «Ղոռադա թուր ա»: Ըսենց որ շատ կովում են, գողերի մինը ընդիան ասում ա. «Ա՛ղպեր, խի՛ եք կովում, էկեք էս մեռելի վրեն փորձենք. թե մի տալուն էս մեռլի գլուխը կտրեց, էնա գլուխ թուր ա, թե չէ հո՛ գաթի դոռադա ա ու դոռադա»:

Էդ խոսքին քոմմա էլ հավանում են: Ընկերներից մինը թուրը վերա ա ունում, գալի մեռլի կուշտը. հենց էն ա ձեռը բանձրացնում ա, որ թուրը վրա բերի մեռլի շլնքին, էն սհաթը մեռելը դուբուրի միջիցը վեր ա կենում, թռնում, էն դիհը կաննում: Գողերը էս որ

տենում են, քոմմա թողում են, փախնում: Հենց էդ վախտը մեռլի-
ընկերը իրա տափ կացած տեղիցը դու ա գալի:

— Ա՛րի, ա՛ղպեր ջան, էլի ես ու դու ընկեր ենք. դաթի ես էլ
դաստի ի մտե ըստե, որ էս գողերին վախացնենք ու էս խաղին են
իրար հեննա փայ անենք:

Սուտ մեռելն էլ կավատա ընկոր խոսքին: Կրերեն, ինչ կա շկա,
քոմմա փայ կանեն, կալրծենն: Պարտքատերը էլի կկպնի մեռլի յա-
խեն, թե.— Մի արասիս տո՛ւ:

Հենց էդ վախտը գողերը մարդ կղրկեն՝ էթա տենա՝ էն մեռելը
ի՞նչ էլավ: Էդ գողը կէթա զլուխը կկոխի ժամի փանջարեն, որ տե-
նա՝ նեքսեր էն մեռելը ի՞նչ ա անում: Հենց կոխելու բաշտան էն
սուտ մեռելը ձեռքը կգցի էդ գողի՝ քթակը վեր կունի, կտա ընկորը:

— Հը՛, — կասի, — էս էլ քու մի արասու տեղը:

Էդ գողը էս որ կտենա, վախլությունիցը օխտը գազ ծլունդ կըլ-
նի, փանջարիցը կթոնի, կփախնի, կէթա ընկորտանցը նաղլ կանի:

— Բա՛, շե՛ք ասի, — կասի, — մեռելները իրար միջի մեր գո-
ղացած խաղին են փայ ին արե, մնին մի արասի պակսել էր, իմ
քթակը վե կալան արասու տեղակ:





7. ՀՈՒՆԱՐՈՎ ԳՈՂԵՐ

Ավալ ժամանակին էլել ա, չի էլել մի թագավոր: Էս թագավորի հերկումը ընե՛նց գողություններ ին ըլնում, որ ինչքան ման ին գալի, գողերին չին կարում գտնի:

Էս թագավորը միտք ա անում, թե ո՞նց անի, ի՞նչ իլլաշ անի, որ գողերին գտնի. ա՛խր, ըսենց բան չիլնի՝ օր չիլնի, որ իրա խալ-խը չգան գանգատ:

Վերջը որ շատ միտք ա անում, մի օր էլ գեյմը փոխըմ ա, ասում ա. «Էլի ե՛ս ման գամ, բալքի իմ երկրի գողերին գտնեմ»:

Ըտենց գեյմը փոխած ընկնում ա իրա քաղաքը՝ ման գալի: Տենըմ ա, հրե իրեք մարդ իրար հեննա քչփչում են. մատը կծում ա, ասում ա. «Վա, չկա սրանցում մի բան կա»:

Դուզ էթում ա դրանց յախիցը պինդ բռնում ա, թե.— Բար՛-աջո՛ղում, ա՛յ աղպրտինք, դուք ո՞վ եք:

Նրանք թագավորի բարովն առնում են ու ուզում են թուլը տան դրան՝ գլխներիցը ռադ անեն:

Համա թագավորը դայիմ կայնըմ ա դրանց կշտին ու պոկ չի գալի դրանցից, ասում ա.— Աղպե՛ր, ես էլ դարիբ մարդ եմ, դուք ի՞նչ փեշակի տեր եք՝ ինձ էլ ձեզ հեննա ընկեր արեք. իմ ձեռիցն էլ ինչ գա, ձեզ կօգտեմ:

Դրանք ռազի են ըլնըմ, ասում են, թե.— Գողությունով ենք զլուփս պահում. թե դու ղաբուլ ես մեզ հեննա գողություն անիլ՝ արե՛ք:

Թագավորն ասում ա.—Ի՛նչ անենք, ես դաբուկ եմ. դե՛, ասեք տենամ՝ ձեր հունարը ի՛նչ ա, որ կարլւմ եք գողութիւն անի:

Մինը՝ ասում ա.— Ես ըսե՛նց հունարի տեր եմ, որ ինչքան ղայիմ փականած դուռ ըլնի՝ ձեռ տամ թե չէ, էն սհաթը կըացվի:

էն մինը ասում ա.— Իմ հունարն էլ էն ա, որ գշերը ընչքան էլ մոթը ըլնի, որ մարդի տենամ, ցերեկը էն սհաթը կճանանչեմ:

էն մինն էլ ասում ա.— Ես շան լեզուն հասկանում եմ. հենց հաշում ա թե չէ, իմանում եմ՝ ինչ ա ասում:

Թագավորն էլ ասում ա.— Իմ հունարն էլ էն ա, որ մի բեղս օլորեմ՝ ինչքան նեղ տեղը մարդ ըլնի կազատվի ¹:

Դողերն ասում են.— Աղպեր քու հունարն էլ մեծ հունար ա. որ ըտենց ա, շա՛տ լավ, մեղ հեննա հալալ ընկեր ես:

Քոմմեքը իրար հեննա միտք են անըմ, թե. «Ո՛ւմ տունը էթանք կտրենք»: Ընդիան թագավորը ասում ա.— Էկեք ըսօր էթանք թագավորի ամարաթը կտրենք, հաղիր շորս հոգով ենք:

Դողերը քոմմա դաբուկ են ըլնում սրա առածին:

Հենց մթնում ա թե չէ՝ էթում են թագավորի ամարաթը. նի են մննում թե չէ՝ շունը հաշում ա:

Դողերի մինը, որը որ շան լեզու էր հասկանըմ, ասում ա.— Տղե՛րք, էկեք եղ էթանք. շունը ասում ա. «Ո՛ւր եք գալի, տերը ձեզ հետ ա»:

Թագավորը էն դճիցը վրա ա բերում.— Տնա՛շեն, ընենց բան ասեցիր դու էլ, որ էփած հավի ծիծաղը կգա, մեղ հեննա ուր ա տեր:

Քոմմեքն էլ նի կմննեն նեքսե. լավ, թամուղ, ինչ կա, չկա կրեբեն, փայ կանեն թագավորի խազինեն. իրան էլ ընչքան հասնելու էր՝ փայը վերնում ա, գալի էլի ամարաթը:

էգսի օրը խաբար ա դուս գալի, որ գշերը թագավորի ամարաթը սրբել են տարի:

Թագավորը մարդ ա դրկըմ գողերին բերել ա տալի կուշտը, հարցնըմ ա.— Դո՛ւք եք իմ ամարաթը կտրե:

էն գողը, որ մարդի ճանանչում էր, ասում ա.— Թագա՛վորն ապրած կենա, քեզ հեննա ենք կտրե քու ամարաթը:

Թագավորը էս որ լսում ա, շատ ա հերստտում, թե.— Ո՛նց եք համարձակվում, ինձ էլ ձեզ հեննա գող եք շինում:

¹ Գրամման ձեռագրում այս արտահայտության փոխարեն եղել է. «աշխարհը կ'փանդվի» բառերը, որոնք գրի առնողը շնչել է (Մ. Կ.):

Համա էն գողը էլի ասում ա.— Դո՛ւ գիտաս. ի՛նչ կուզես արա,
համա դու մեզ հետ իր:

Թագավորը, որ տենում ա սրանց հունարը, էլ ավստսը գալիս
ա սրանց վնասի. լավ-լավ փեշքաշներ ա տալի, բոլ փող, թամբահ
ա անում, որ էլ գողությունով չապրեն, իրենց հմար մի գործ գտնեն:

Էդ գողերն էլ շնորհակալություն են անում, խոսք են տալի,
որ էլ ըսկի գողություն չանեն: Գլուխ են տալի, էթում: Էթում են
իրենց երկիրը, իրենց հմար մի գործ գտնում, հալալ աշխատանքով
ապրում են, համ թագավորին օրհնում են, որ իրանց էն շար
ճամփիցը ազատեց:

Աստանից իրեք խնձոր վեր ընկավ. մեկը՝ ասողին, մինը՝ ասիլ
տվողին, մինն էլ՝ էն գողերին ու անկաջ դնողին:

